



**ՀՀ 2027 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ**

Հայտատու մարմինը՝

ՀՀ ՏԿԵՆ ԶՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

**Հայտի հաստատման
ամսաթիվը՝**

16.02.2026թ.

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

«ՏԿԵՆ» ջրային կոմիտեն, որպես պետական սեփականություն հանդիսացող ջրային և ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգերի կառավարման ու օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականություն մշակող և իրականացնող մարմին, ապահովում է խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտներում համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը:

Ոլորտային քաղաքականության հիմնական թիրախներն են՝

- Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում
- Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ
- Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակի գնահատում և բարելավում
- Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր
- Ջրամբարաշինության իրականացում
- Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման հնարավորությունների ստեղծում, ինքնահոս համակարգերի և նոր ջրամբարների նախագծում և շինարարություն
- «Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականության ապահովում
- Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում,
- Գործող ջրամբարների պատշաճ շահագործում

Ջուրը կայուն զարգացման հիմքն է, և կայուն զարգացման 6-րդ նպատակն ու թիրախները սերտորեն փոխկապակցված են մյուս բոլոր նպատակներին ու թիրախներին:

Սերտորեն փոխկապակցված են նաև ԿԶՆ 6 բոլոր թիրախները. ջրի և սանիտարիայի հասանելիություն և կայուն կառավարում ապահովելու համար անհրաժեշտ է կառավարել մրցակցային ջրօգտագործումները և օգտվել ջրօգտագործման, վերաօգտագործման ու վերաշրջանառության, էկոհամակարգերի պահպանության և ջրի որակի առկա համազդեցություններից:

Քաղաքականության նպատակների և թիրախների մասին տեղեկությունը ներկայացված է Հավելված 3-ի Մաս 2-ում :

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտում խնդիրների լուծումը պետք է իրականացվի՝ հիմք ընդունելով հետևյալ գերակայությունները.

- Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում
- Ոռոգման ծառայություններ մատուցող և ոռոգում-ջրառ իրականացնող ընկերությունների սուբսիդավորում
- Ոռոգման համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումներ և ոռոգման համակարգի հիմնանորոգում
- Ջրամբարաշինության ծրագրերի նախապատրաստում և իրականացում, հիդրոտեխնիկական կառույցների հիմնանորոգում, Օրվա կարգավորման ջրավազանների կառուցում և վերակառուցում
- Արփա-Սևան թունելի ջրային համակարգի հավատարմագրային կառավարում, վթարային հատվածների հիմնանորոգում
- Կոլեկտորադրենաժային ծառայություններ

Հայտին կից ներկայացված է Հավելված 12-ը:

3. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Բազային բյուջեի գնահատում

3.1.1 Ջրային տնտեսության ոլորտում ծրագրերի համակարգում և մոնիտորինգ 1109-11001, 31001

ՀՀ վարչապետի 11.06.2018թ. N 706-Ա որոշմամբ Ջրային կոմիտեի աշխատողների առավելագույն թվաքանակը սահմանվել է 75 հաստիքային միավոր, որը նաև հիմք է ընդունվել պահպանման ծախսերի հաշվարկման համար:

Ծախսերի հաշվարկների հիմքում ընկած են նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված նորմատիվները, «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով աշխատավարձերի բնականոն աճի, եկամտային ու քաղաքացիական ծառայողների պարգևատրման ֆոնդի հաշվարկները:

ՀՀ **2027 թվականին** Ջրային կոմիտեի վարչական ապարատի պահպանման համար անհրաժեշտ է **490.683.7** հազար դրամ, այդ թվում՝ տեխնիկական հագեցվածության բարելավման համար 4,420.0 հազար դրամ, **2028 թվականին՝ 468,658.3 հազար դրամ**, այդ թվում՝ տեխնիկական հագեցվածության բարելավման համար 9,540.0 հազար դրամ, **2029 թվականին՝ 473,288.6** հազար դրամ, այդ թվում՝ տեխնիկական հագեցվածության բարելավման համար 4,420.0 հազար դրամ:

Կից ներկայացված է Կառավարման ապարատ ֆայլը:

3.1.2 Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում 1004-11001

Ջրային համակարգերի կառավարման արդյունավետությունը պայմանավորված է նաև ճիշտ սակագնային քաղաքականության իրականացմամբ: Ներկայումս գործող սակագինը թույլ չի տալիս փոխհատուցել ոռոգման ջրի ինքնարժեքի հետ կապված ծախսերը, իսկ նշված ծախսերի հատուցման համար պետական բյուջեից անհրաժեշտ սուբսիդիաները շատ հիմնավոր և կարևոր են, իսկ հատկացման հնարավորություններ՝ սահմանափակ:

2027 թվականին ջրամատակարարման ծավալը կանխատեսվել է 932,0 մլն խմ, որից ինքնահոս եղանակով 850.0 մլն խմ, մեխանիկական եղանակով 82,0 մլն խմ:

2028 թվականին ջրամատակարարման ծավալը կանխատեսվել է 935,0 մլն խմ, որից ինքնահոս եղանակով 853.0 մլն խմ, մեխանիկական եղանակով 82 մլն խմ

2029 թվականին ջրամատակարարման ծավալը կանխատեսվել է 939 մլն խմ, որից ինքնահոս եղանակով 855.0 մլն խմ, մեխանիկական եղանակով 84,0 մլն խմ

«Ջրառ» ՓԲԸ-ի տարեկան գործունեության համար յուրաքանչյուր տարի հատկացվել է 1,285,129.5 դրամ սուբսիդիա: Տրամադրված սուբսիդիան ուղղվելու է Ընկերության գործունեության ֆինանսական ճեղքվածքի մարմանը, որն իր մեջ ներառում է ինչպես օգտագործված էլեկտրոգիայի վարձավճար մարելը, այնպես էլ աշխատավարձը, գարնան նախապատրաստական աշխատանքները (մաքրում, նորոգում, նյութերի և ապրանքների ձեռքբերում): 2025թ. միայն էլեկտրաէներգիայի մասով ծախսը կազմել է 1,290,651.7 հազար դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի հիմքով «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դասվում է այն սպառողների շարքին, որոնք նախորդ օրացույցային տարվա ընթացքում իր 6(10) կՎ ու բարձր լարման՝ մեկ միլիոն ԿՎտժ սպառումը գերազանցող բոլոր հաշվառման կետերում միասին սպառել են 12 միլիոն կՎտժ-ից ավելի էլեկտրաէներգիա, ուստի պարտավոր են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի և շուկայի կանոնների համաձայն այդ կետերի մասով ստանալ որակավորված սպառողի կարգավիճակ: Որակավորված սպառողի կարգավիճակում մնալու համար ընկերությանը անհրաժեշտ է լրացուցիչ 531,000.0 հազար դրամ գումար, որպես բանկային երաշխիք:

Ելնելով վերոգրալից առաջարկում ենք վերանայել «Ջրառ» ՓԲԸ-ին տրամադրվող սուբսիդիայի չափը՝ 2027-2029թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսել **1,900,000.0 հազար** դրամ:

3.1.3 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում 1004-11002

Ներկայում Ջրային կոմիտեի պատվերով Համաշխարհային բանկի ՋՈԾԲ /WISE/ ծրագրի շրջանակներում մշակվել է Ջրային ոլորտի 2026-2035թթ.ռազմավարական ծրագրի մշակման համար խորհրդատվական ծառայության առաջադրանքի պայմանները:

ՀՀ պետական բյուջեից ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ մատուցող կազմակերպություններին սուբսիդիաները հիմնականում տրվել են ընթացիկ տարվա բյուջեներով պլանավորված ֆինանսական ճեղքվածքի մարման համար: Ընդ որում, ՀՀ պետական բյուջեից հատկացված սուբսիդիաները վերջին տարիներին հիմնականում

ուղղված էին ջրամատակարար կազմակերպությունների կողմից ծախսված էլեկտրոգիայի գծով ծախսի մարմանը, մասնավորապես 2025թ. այն կազմել է շուրջ 60.0 %:

Ներկայումս ԶՕԸ-երը չեն ապահովում ինքնաձախսածածկման սկզբունքը: Ոռոգման ջրի միջին ինքնարժեքը 2026թ. տատանվում է 11.1–133.1 դրամ/մ³՝ կախված մեխանիկական արտադրության ջրի ծավալներից, սակայն ոռոգման ջրի վճարը գանձվում է 11 դրամ/մ³:

15 ԶՕԸ-երի կողմից կայուն ջրամատակարարմամբ ապահովվել է՝ 2017 թվականին՝ 80,6 հազ. հա հողատարածքների, 2018 թվականին՝ 81,6 հազար հա, 2019 թվականին՝ 82.4 հազ. հա, 2020 թվականին՝ 85.4 հազ. հա, 2021 թվականին՝ 87,3 հազ. հա, 2022թ.՝ 90.2 հազ.հա, 2023թ.՝ 87.9 հազ.հա, 2024թ.՝ 86.1 հազ.հա, 2025թ.՝ 85.7 հազ.հա իսկ 2026թ. նախատեսվում է ապահովել **91.2** հազ.հա:

Ոռոգման ջրի դիմաց 2018 թվականին ԶՕԸ-երի կողմից գանձվել է 3,284.0 մլն դրամ, 2019 թվականին՝ 4,047.7 մլն դրամ, 2020 թվականին՝ 3,740.3 մլն դրամ, 2021 թվականին՝ 4,284.1 մլն դրամ, 2022 թվականին՝ 4,661.4 մլն դրամ, 2023 թվականին՝ 4,617.7 մլն դրամ, 2024 թվականին՝ **4,560.2** մլն դրամ, 2025 թվականին՝ **4,711.6** մլն դրամ որը ամենաբարձր ցուցանիշն է վերջին տարիներին՝ հասույթից գանձման տոկոսը կազմում է 77.2:

ԶՕԸ-երին տրված սուբսիդիայի չափը ըստ տարիների կազմել է. 2020թ.՝ 7,451,816.0 հազար դրամ, 2021թ.՝ 8,351,469.5 հազար դրամ, 2022թ. 9,356,700.3 հազար դրամ, 2023թ.՝ 10,351,346.9 հազար դրամ, 2024թ՝ 8,853,783.6 հազար դրամ, 2025թ.՝ 9,420,220.0 հազար դրամ:

2027 թվականի ֆինանսական աջակցության կանխատեսման համար հիմք է ընդունվել ԶՕԸ-երի 2026 թվականի բյուջեների, համաձայն որի ֆինանսական ճեղքվածքը կազմում է **10,244,611.2** հազար դրամ: Առաջարկվում է 2027-2029թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսել **10,244,611.2** հազար դրամ դրամ՝ որպես դրամաշնորհ, հաշվի առնելով հետևյալը.

ԶՕԸ-երի ֆինանսական ճեղքվածքը սուբսիդիա դասակարգելը նպատակահարմար չէ՝ ինչպես ստուգող մարմինների կողմից արձանագրումների, այնպես էլ ոռոգման ոլորտի առանձնահատկություններից ելնելով առկա օբյեկտիվ հիմնախնդիրների պատճառով, օրինակ՝

1. Զրային կոմիտեի կողմից ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով է սահմանվելու յուրաքանչյուր ԶՕԸ-ի սուբսիդիայի հաշվարկման հիմքում դրված ծախսերի կազմը, այդ ծախսերի, այդ թվում՝ նվազագույն շահավետ գնի հաշվարկման նորմատիվները՝ հաշվի առնելով համակարգի անմխիթար վիճակի օրեցօր վատթարացման և դրա մի մասի տարբեր ծրագրերի միջոցներով պարբերաբար իրականացվող հիմնանորոգումների պայմանները:

2. Ոռոգման ջրի մեկ խոր.մ-ի վաճառքի 11 դրամ նվազագույն գնի պետության հանձնարարությամբ և որոշած գնով սահմանված լինելու հանգամանքը՝ հաշվի առնելով, որ ԶՕԸ-երի պետական աջակցության 2011-2016 թվականների մինջնաժամկետ ռազմավարության վերաբերյալ ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N 1291-Ն որոշմամբ 2012 թվականի համար նախատեսվել է 11 դրամ, 2013 և 2014 թվականների՝ 12 դրամ, 2015 և 2016 թվականների՝ 13 դրամ, իսկ ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման ռազմավարության վերաբերյալ ՀՀ կառավարության 2016 թվականի N33 արձանագրային որոշմանը 2019 թվականի համար նախատեսվել է նվազագույնը 11,5 դրամ, 2020 թվականի՝ 12 դրամ, 2021 թվականի՝ 12,5 դրամ:

3. Զրային կոմիտեի կողմից ԶՕԸ-երի մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն քանակ սահմանելու հնարավորությունը և դրա հիմնավորումը, առավել ևս, ոլորտում հնարավոր չէ նախապես կանխատեսել տվյալ տարվա կլիմայական պայմաններով, տեղումների քանակով, կուտակվելիք ջրային ռեսուրսներով պայմանավորված՝ տվյալ տարվա ջրապահանջարկը և դրա առավելագույն սահմանը:

4. Մինչև ոռոգման սեզոնի սկսելը (մարտ, ապրիլ, որոշ մարզերում մայիսի վերջ) ԶՕԸ-երը ոռոգման համակարգը նախապատրաստում են ոռոգման ջրի մատակարարմանը, որի իրականացման համար պահանջվում է շուրջ 3,5 մլրդ դրամ նորոգման, պահպանման և վարչական ծախսեր: Մինչև ոռոգման սեզոնի սկսելը, ոռոգման համակարգի նախապատրաստման աշխատանքների ժամանակահատվածում ԶՕԸ-երը, ըստ էության, գումարների մուտքեր չեն ունենում, քանի որ հավաքագրումների գերակշիռ մասը կատարվում է փաստացի ոռոգման սեզոնին: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ՀՀ պետական բյուջեից ֆինանսական աջակցության, որի տրամադրման դեպքում՝ ԶՕԸ-երի կողմից փաստացի ոռոգման ծառայություն մատուցված չլինելու պարագայում, հնարավոր չի լինում կազմել փաստացի մատուցված ծառայությունների քանակի վերաբերյալ ակտեր, որոնց հիման վրա տրամադրվում է սուբսիդիան:

5. Միաժամանակ, հասույթի դիմաց գանձումները վերջին 5 տարիներին չեն գերազանցել 77.2 %-ը, մասնավորապես՝ 2017թ.- 63.5%, 2018թ.- 50.3%, 2019թ.- 67.2%, 2020թ.- 60.9%, 2021թ.- 69.7%, 2022թ.- 69.5%, 2023թ.- 71.9%, 2024թ.- 76.8%, 2025թ.-77.2%: չգանձված գումարների դիմաց ԶՕԸ-երը պետական ֆինանսական աջակցություն ստացել են, սակայն սուբսիդիա չի համարվում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ոռոգման ոլորտին վերաբերող երկու ռազմավարություններով (ՀՀ կառավարության 31.09.2010թ. N1291-Ն որոշում և 25.08.2016թ. N33 արձանագրային որոշում) ԶՕԸ-երին պետական ֆինանսական աջակցության տրամադրումը սահմանվել է ընթացիկ դրամաշնորհների տեսքով և մինչև 2018 թվականը ՀՀ պետական բյուջեներով ԶՕԸ-երի ֆինանսական աջակցությունը տրամադրվել է որպես ընթացիկ դրամաշնորհներ:

ԶՕԸ-երին հատկացվող պետական ֆինանսական աջակցությունը ըստ էության ամբողջությամբ նպատակահարմար է դիտարկել որպես ընթացիկ դրամաշնորհ՝ համաձայն Որոշմամբ հաստատված Հավելվածի 4-րդ կետի, այն է. *«Սույն կարգի իմաստով դրամաշնորհը տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով բյուջեից կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացումն է»:*

Միաժամանակ, յուրաքանչյուր տարի, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 29.05.2025թ. 678-Ա որոշմամբ սահմանված դեպքերում ջրօգտագործողներին ոռոգման ջուր է մատակարարվել անհատույց, որը հասույթ չի ձևավորել, ինչը լրացուցիչ ֆինանսական բեռ է ընկերությունների համար:

3.1.4 Փոքր և միջին ջրամբարների կառուցման խորհրդատվություն և կառավարում 1004-11013

Ջրամբարաշինական ծրագրերի իրականացմանը և Զրային կոմիտեի այլ կանոնադրական խնդիրների լուծմանն աջակցող մասնագիտական ծառայություններ ձեռք

բերելու նպատակով ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով հատկացվել է 166,600.0 հազար դրամ: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև Համաշխարհային բանկի կողմից ներկայացված «Զրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի» (WISE), ՀՖԳ, ԱԶԲ, ինչպես նաև Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հետ կապված աշխատանքները: **2027-2029թթ.** յուրաքանչյուր տարվա համար առաջարկվում է նախատեսել **166,600.0** հազար դրամ:

Խորհրդատվական ծառայությունները միտված են ջրամբարաշինական ծրագրերի, ինչպես նաև Զրային կոմիտեի այլ կանոնադրական խնդիրների լուծման ընթացքում աջակցելու համապատասխան փաստաթղթերի նախագծերի մշակման գործընթացին՝ ապահովելով հետադարձ կապը վերանայված փաստաթղթերում, նախագծերի հրապարակում, այդ նախագծերի վերաբերյալ հանրային խորհրդակցությունների անցկացում, խորհրդատվական գործընթացի գրանցում, փաստաթղթավորում, նախագծերի լրամշակում և այլ գործառույթների իրականացում:

Խորհրդատուները անմիջական մասնակցություն են ունենում նաև շինարարական աշխատանքների ընդունման և ընթացիկ վերահսկողության աշխատանքներին:

3.1.5. Աջակցություն ոռոգման համակարգի առողջացմանը 1004-12001

ՀՀ Կոտայքի մարզի Սևաբերդի ջրամբարի երկրաֆիզիկական հետազոտությունների, թասի հակաֆիլտրացիոն միջոցառումների իրականացման և հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնման, վերազինման ու արդիականացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման համար ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով հատկացվել է **34,520.0** հազար դրամ: Շինարարության համար նախատեսվող գումարը կհստակեցվի նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ձեռքբերումից հետո:

Ապարանի ջրամբարի ճնշումային թունելի մետաղյա երեսպատվածքի վերականգնման աշխատանքներ:

Ախուրյանի ջրամբարի ոռոգման ջրթող կառուցվածքի ջրընդունման հանգույցի և ջրմարիչ-ջրծեծ հորից ջուրը հեռացնող խողովակաշարի վարակառուցման-վերականգնման աշխատանքներ:

Արփի լճի ջրամբարի պատվարի վերակառուցում:

Ընդամենը միջոցառման համար առաջարկում ենք նախատեսել 2027թ.՝ 1,000,000.0 հազար դրամ, 2028թ.՝ 1,000,000.0 հազար դրամ, 2029թ.՝ 1,000,000.0 հազար դրամ:

3.1.6 Ոռոգման համակարգերի հիմնանորոգում 1004-31002

2024-2025 թվականներին Զրային կոմիտեն մրցութային գործընթացների արդյունքում ձեռք է բերել հրատապ լուծում պահանջող ոռոգման համակարգերի հիմնանորոգման

աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթներ: Նշված նախագծերից 16-ի մասով (որոնք ունեն դրական փորձաքննության եզրակացություններ) դեռևս շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացները չեն մեկնարկել: Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ վերոնշյալ 16 աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ գումարը կազմում է **6,005,027.9 հազ. դրամ** (ներառյալ շինարարական աշխատանքներ, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում): Հաշվի առնելով իրականացվելիք աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված տևողությունները և աշխատանքների բարդությունը՝ 2027 **թվականին** առաջարկում ենք նախատեսել **3,000,000.0 հազ. դրամ** /հաշվի առնելով հետագա մրցութային արդյունքներով տնտեսումները/, իսկ 2028 **թվականին՝ 3,000,000.0 հազ. դրամ**:

Միաժամանակ, հիմնանորոգման աշխատանքների շարունակականությունն ապահովելու համար 2027 **թվականին** անհրաժեշտ է նախատեսել ևս մոտ **40,000.0 հազ. դրամ՝ ոռոգման համակարգերի հրատապ լուծում պահանջող մինչև 10 աշխատանքների** նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար, իսկ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումից հետո սահմանված կարգով շինարարական աշխատանքների մեկնարկների համար 2029 **թվականին անհրաժեշտ կլինի ևս մոտ 4,000,000.0 դրամ**:

1. «Տավուշ» ԶՕ ընկերության «Նոյեմբերյան» տեղամասում է գտնվում Պտղավան N1, Զեյթուն N1, Հաղթանակ N1, Զեյթուն-Հաղթանակ N1, N2 պոմպակայաններին և Դեբեդավանի ինքնահոս ջրանցքին սպասարկող 6 կմ երկարություն ունեցող **Զեյթունի ջրանցքը**: Համակարգը սպասարկում է շուրջ 950 հա հողեր, որտեղ ջրօգտագործողների թիվը հասնում է 792-ի: Զեյթունի ինքնահոս ջրանցքի ՊԿ00-ՊԿ40+00 ունի բետոնային կառուցվածք, իսկ ՊԿ 40+00-ՊԿ 60+00 կառուցված ԼՌ-1000 վաքերով:

2024 թվականի մայիսի 26-ին Դեբեդ գետի վարարման հետևանքով ջրանցքը նույնպես վնասվել էր, հատկապես ջրանցքի այն հատվածը, որը կառուցված ԼՌ-1000 վաքերով: Գետը վարարելով և հասնելով ջրանցքի վաքերով հատվածին, թուլացրել է կառուցվածքը: 2025 թվականի ոռոգման սեզոնի ժամանակ ջրանցքը հաճախ խնդիրներ է ունեցել, քանդվել են ԼՌ-1000 վաքերը, անհնարին դարձնելով ջրանցքի շահագործումը: Խնդիրը հիմնականում վերաբերում է ջրանցքի վերջին 2 կմ հատվածին՝ ՊԿ 40+00-ից հետո, որից օգտվում են Պտղավան N1, Զեյթուն N1 և Դեբեդավանի ինքնահոս ջրանցքը, որոնք սպասարկում են շուրջ 400 հա տարածք:

Վթարների հետևանքով տարվա ընթացքում հաճախակի դադարեցվել է Պտղավան, Բագրատաշեն և Դեբեդավան բնակավայրերի ջրամատակարարումը՝ ջրանցքում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար, ինչն էլ իր հերթին առաջացրել է հերթեր՝ խափանելով բնականոն ջրամատակարարումը: Զրանցքի մի հատվածն էլ գտնվում է սահմանային շերտում և անընդհատ թափվող ջուրը խոչընդոտում է սահմանապահների բնականոն աշխատանքները:

Զրանցքն ունի հրատապ հիմնանորոգման կարիք, որի համար նախնական գնահատմամբ անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կազմում է շուրջ **400,000.0 հազար դրամ** (380,000.0 շինարարություն, 20,000.0 նախագիծ)

2. **Ոսկեպար-Բաղանիս-Ոսկեվան-Կոթի ջրագիծն** ունի 25 կմ երկարություն, որը սպասարկում է Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեվան և Կոթի նյութերից շուրջ 167 հա տարածք,

որից օգտվում են թվով 752 ջրօգտագործողներ: 2024 թվականի մայիսի 26-ի հեղեղներից վնասվել են ջրագծի սպասարկման ճանապարհը՝ անհնարին դարձնելով ջրագծի գլխամասին մոտենալը: Գոյություն ունեցող բետոնային հենակները, որոնք նախատեսված էին ջրանցքի անխափան աշխատանքի համար, հեղեղի հետևանքով վնասվել են և կորցրել են իրենց նշանակությունը: Այժմ ինքնահոս ջրագծի գլխամասում սպասարկում հնարավոր չէ իրականացնել, ինչն էլ մեծ ռիսկ է պարունակում վթարների առաջացման համար: Նախնական գնահատմամբ ֆինանսական միջոցների չափը կազմում է **շուրջ 59,000.0 հազար դրամ** (55,000.0 շինարարություն, 4,000.0 նախագիծ):

3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 19.12.2025 թվականի թիվ ԴԽ/15.3/43451-2025 հանձնարարականի՝ «Հայաստանը ես եմ» նախաձեռնության շրջանակում ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի **Երվանդաշատ և Բագարան բնակավայրերի վերին հատվածով անցնող ոռոգման ջրատարի** փլուզման վտանգի վերաբերյալ, Ջրային կոմիտեի Ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչության կողմից իրականացվել է համալիր ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված նյութերն ու տեղեկատվությունը համադրվել են նշված հարցի վերաբերյալ ՀՀ Ներքին գործերի նախարարության, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի, ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի, ինչպես նաև տվյալ տարածքը սպասարկող «Շենիկ» ՋՕԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության հետ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Բագարան և Երվանդաշատ բնակավայրերին սպասարկող Ջրատարի LR 80 տիպի վաքերով հատվածները գտնվում են կրիտիկական վիճակում: Ջրատարի ֆիզիկական մաշվածությունը հանգեցնում է հաճախակի վթարների, ջրի զգալի կորուստների և ոռոգման ջրի անկանոն մատակարարման: Խնդիրը համակարգային բնույթ ունի, իսկ ընթացիկ վերանորոգումները չեն ապահովում կայուն և արդյունավետ լուծում՝ համակարգի գերմաշվածության պատճառով: Միաժամանակ՝ «Շենիկ» ՋՕԸ-ի սպասարկման տարածքում գտնվող տվյալ հատվածը հանդիսանում է հաջորդաբար շարունակվող՝ շուրջ 4000 մետր ընդհանուր երկարությամբ ոռոգման ջրատարի կապող (հիմնական) օղակ: Տվյալ հատվածի վթարային վիճակը խաթարում է նաև համակարգի ամբողջական աշխատանքը՝ բացասաբար ազդելով ջրատարի հաջորդաբար շարունակվող հատվածների շահագործման վրա, առաջացնելով ջրի մատակարարման խափանումներ և լրացուցիչ ջրակորուստներ: Ջրատարի վերականգնման կարիք ունեցող ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 2300 մետր, որից մոտ 1400 մետրը՝ Բագարան բնակավայրում, և մոտ 900 մետրը՝ Երվանդաշատ բնակավայրում: Նախնական տեխնիկական գնահատման համաձայն՝ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ կլինի մոտ 385 հատ LR 80 տիպի վաք, նույնքան բետոնե հենարան, մոտ 21 անկյունային հոր և 12 ջրթող: Մեկ գծային մետրի վերանորոգման միջինացված արժեքը գնահատվում է 33 000–35 000 ՀՀ դրամ, իսկ ծրագրի իրականացման համար պահանջվող ընդհանուր ֆինանսական միջոցների ծավալը՝ մոտավորապես **75–80 մլն ՀՀ դրամ**: Ներկայացված ծավալներն ու արժեքները կրում են նախնական բնույթ, և ծրագրի հիմնավորված ու արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել նախագծանախահաշվային աշխատանքներ՝ վերջնական տեխնիկական լուծումների, աշխատանքների ճշգրտված ծավալների և ֆինանսական հաշվարկների սահմանման համար: Նախնական գնահատմամբ ֆինանսական միջոցների չափը կազմում է **շուրջ 80,000.0 հազար դրամ** (75,000.0 շինարարություն, 5,000.0 նախագիծ):

4. «Արտաշատ» ջրօգտագործողների ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 18.12.2025թ. ներկայացվել է գրություն և 19.01.2026թ. ներկայացվել են լրացուցիչ նյութերը և ղեկավարվելով ՀՀ ջրային ոլորտը կարգավորող օրենսդրությամբ՝ մասնավորապես՝ ՀՀ Ջրային օրենսգրքի 1-ին և 28-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով, Ջրային կոմիտեի Ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչության կողմից ուսումնասիրվել են ներկայացված փաստաթղթերի փաթեթը և առաջարկվող միջոցառումների շրջանակը՝ դրանց տեխնիկական նպատակահարմարության, սպասվող արդյունքների, շահագործման արդյունավետության բարձրացման և շահառու տարածքների վրա ազդեցության տեսանկյունից: Ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերությունը ՀՀ Արարատի մարզի Փոքր Վեդի բնակավայրում ոռոգման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում է կառուցել 3–3,5 կմ երկարությամբ հորիզոնական պոմպակայան: Միաժամանակ արձանագրվել է, որ ներկայացված են ինչպես տեխնիկական բնույթի, այնպես էլ համակարգի շահագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Ընկերության կողմից նշվել է, որ տվյալ սպասարկման տարածքում ոռոգման ջրի մատակարարման և համակարգի շահագործման առումով առկա են մի շարք խնդիրներ, որոնք պայմանավորված են ինչպես ջրատարների և հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական վիճակով, այնպես էլ ջրային կորուստների և ջրաբաշխման արդյունավետության ոչ բավարար մակարդակով: Մասնավորապես՝ համակարգում առկա են ջրի կորուստներ և անարդյունավետ ջրաբաշխում, ինչի հետևանքով ոռոգման ջրի կորուստները կազմում են մոտ 5–8%, իսկ որոշ հատվածներում ջրաբաշխման անարդյունավետությունը հասնում է մինչև 17%: Նշվածի հետևանքով Ընկերության կողմից արձանագրվել են ջրամատակարարման խափանումներ, ինչպես նաև համակարգի մի շարք հատվածներում տեխնիկական մաշվածության բարձր աստիճան: «Արտաշատ» ՋՕԸ-ի կողմից առաջարկվող միջոցառումների իրականացման արդյունքում նախատեսվում է ապահովել ոռոգման ջրի մատակարարման բարելավում՝ շուրջ 366 հա հողատարածքներում, ինչպես նաև ջրի թողունակության ապահովում՝ մոտ 1100–1300 մ³/ժ ծավալով: Ընկերության կողմից ներկայացված նախնական հաշվարկների համաձայն՝ ընդհանուր ներդրումների ծավալը կազմում է մոտ **180–217 200 մլն ՀՀ դրամ**: Միևնույն ժամանակ արձանագրվել է, որ ներկայացված նյութերում առկա են ընդհանուր նկարագրություններ և տեխնիկական բնույթի առաջարկներ, սակայն որոշ ուղղություններով անհրաժեշտ է լրացուցիչ հիմնավորում, մասնավորապես՝ ակնկալվող արդյունքների թվային և չափելի ցուցանիշների ներկայացում, տեխնիկական հիմնավորումների և նախագծային լուծումների հստակեցում, ֆինանսատնտեսական հաշվարկների և ծախսերի գնահատման ներկայացում, հնարավոր տեխնիկական և ֆինանսական ռիսկերի գնահատում, շահառու տարածքների վրա ազդեցության վերլուծական գնահատում: Ներկայացված ծավալներն ու արժեքները կրում են նախնական բնույթ, և ծրագրի հիմնավորված ու արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել նախագծանախահաշվային աշխատանքներ՝ վերջնական տեխնիկական լուծումների, աշխատանքների ճշգրտված ծավալների և ֆինանսական հաշվարկների սահմանման համար: Նախնական գնահատմամբ ֆինանսական միջոցների չափը կազմում է **շուրջ 200,000.0 հազար դրամ** (188,000.0 շինարարություն, 12,000.0 նախագիծ):

Հաշվի առնելով Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի բարդությունը, շահագործման հրատապությունն ու կարևորությունը՝ կապված այն հանգամանքի հետ, որ ջրագծի շահագործման դեպքում Ազատի քառաստիճան պոմպակայանի 4-րդ աստիճանով 50% քիչ ջուր կվերամղվի (500.0 հազար խմ), որի արդյունքում կունենանք էլէներգիայի և Ազատի ջրամբարի ջրի խնայողություն (որը հանդիսանում է այլընտրանք Սևանա լճից Արտաշատի մայր ջրանցքով տեղափոխվող ջրի համար), ինչպես նաև Կոտայքի մայր ջրանցքով Ջրվեժ-Ձորաղբյուր համայնքներին հասցվող Սևանա լճի ջուրը՝ Ջրային կոմիտեն 2025 թվականի նոյեմբեր ամսին նախաձեռնել է լիցենզավորված օժանդակ ինժեներական ծառայությունների ձեռքբերման գործընթաց՝ մասնագիտական կառույցի կողմից ևս մեկ անգամ աշխատանքային խմբի կողմից բարձրացված հարցերը ուսումնասիրելու և ներկայացնելու եզրակացություն՝ Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի շահագործման համար անհրաժեշտ իրականացվելիք աշխատանքների ցանկերի վերաբերյալ (ներառյալ տեղադրվելիք սարք-սարքավորումների և կառուցվածքների սպառիչ ցանկերի): Իրականացված աշխատանքների արդյունքում օժանդակ ինժեներական ծառայություններ մատուցող «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի գործարկման համար անհրաժեշտ աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ, համաձայն որի համակարգի գործարկման համար անհրաժեշտ է **2027 թվականին նախատեսել 22,913.49** հազ. դրամ:

Ընդամենը միջոցառման համար պահանջվում է. 2027թ.՝ 3,800,000.0 հազար դրամ, 2028թ.՝ 3,000,000.0 հազար դրամ, 2029թ.՝ 4,000,000.0 հազար դրամ:

3.1.7 Օրվա կարգավորման ջրավազանների կառուցում և վերակառուցում 1004-31009

«Քաղաքաշինության կոմիտեի կողմից ստացվել են օրվա կարգավորման ջրավազանների /ՕԿՁ/ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության դրական եզրակացությունները: 7 ՕԿՁ-ների մասով շինարարական աշխատանքները մեկնարկել են, 2-ի մասով՝ մրցույթները շուտով կմեկնարկեն: Ջրային կոմիտեն աշխատանքներ է տանում համապատասխան համայնքների և պատասխանատու գերատեսչությունների հետ՝ մյուս ՕԿՁ-ների նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության դրական եզրակացությունների ստացման ուղղությամբ: Նախագծերն ընդհանուր առմամբ 28-ն են, սակայն այս պահին առավել առաջնային են դիտարկվում 10 ՕԿՁ-ների փաստաթղթային փաթեթները՝ լրամշակելու և կրկին պետական համալիր փորձաքննության ներկայացնելու նպատակով: «Ք 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված աշխատանքների մի մասը, պայմանավորված նախագծերով նախատեսված շինարարական աշխատանքների տևողությունների և 2026 թվականի 2-րդ կիսամյակում մեկնարկելու հանգամանքներով,

հնարավոր է շարունակել 2027 թվականի 1-ին կիսամյակում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ աշխատանքների իրականացման համար առաջարկում ենք նախատեսել. **2027թ.՝ 1,500,000.0 հազ. դրամ, իսկ 2028 թ.՝ 1,000,000.0 հազ. դրամ** (ներառյալ շինարարական աշխատանքները, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը

3.1.8 Գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքներ 1004-31012

ՀՀ կառավարության 23.02.2017թ. N 183-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով նախատեսված գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների կազմակերպման ու իրականացման պետական կառավարման լիազոր մարմին է ճանաչվել Ջրային կոմիտեն:

Հակահեղեղային միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր տարի՝ ընտրելով գետերի և սելավատարների առավել վտանգավոր հատվածները:

2027-2029 թվականների ընթացքում յուրաքանչյուր տարվա համար 4-5 նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար մոտարկված կպահանջվի շուրջ **50,000.0** հազ դրամ, իսկ շինարարության համար՝ յուրաքանչյուր տարի **650,000.0** հազ դրամ՝ տեղական ինքնակառավարման մարմինների և արտակարգ իրավիճակների լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա առաջնահերթություն ստացած աշխատանքների իրականացման համար:

Հակահեղեղային միջոցառումներն իրականացվում են յուրաքանչյուր տարի՝ տեղական ինքնակառավարման մարմինների և ՀՀ ներքին գործերի նախարարության լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա: Առաջարկվել է ստեղծել մասնագիտական աշխատանքային խումբ, որը կուսումնասիրի վերը նշված գետերի և սելավատարների առավել վտանգավոր հատվածները և առաջնահերթություն ստացած աշխատանքների իրականացման համար կմեկնարկի աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների գնման գործընթացը, որի ավարտին կհաջորդի շինարարական աշխատանքների գործընթացը:

3.1.9 Փոքր և միջին ջրամբարների կառուցում 1004-31013

Փոքր և միջին ջրամբարներից թվով 5-ի՝ Աստղածորի, Քասախի, Ելփինի, Լիճքի և Արթիկի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներն ավարտական փուլում են, իսկ Արգիճիի ջրամբարի նախագծման աշխատանքների ժամկետները երկարաձգվել են՝ տարածքում ենթակառուցվածների (ՓՀԷԿ) առկայության պատճառով:

Մյուս 12 ջրամբարների տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունների ծառայությունների ձեռքբերման նախապատրաստական աշխատանքների և նախագծման համար 2026 թվականի համար առաջարկվել էր շուրջ **1,500,000.0** հազ. դրամ:

2026 թվականին 5 ջրամբարների մասով նախատեսվում է մեկնարկել շինարական աշխատանքների գործընթաց, որի համար նախնական բյուջետային հայտով առաջարկվել

էր 2027թ. համար շուրջ **4,500,000.0** հազ.դրամ, ընդամենը **6,000,000.0** **հազար դրամ**, 2028 թվականի համար՝ շուրջ **16,000,000.0** հազ.դրամ, 2029 թվականի համար՝ 26,000,000.0 հազ.դրամ: Ակնկալվում է ֆինանսական համաձայնագիր կնքել ՎՋԵԲ-ի հետ:

3.1.10 Ջրամբարների վերականգնման և վերազինման աշխատանքներ 1004-31014

«Տարածքում առաջացող մակերևութային ջրերի արդյունավետ կառավարման և ջրի պահանջարկի բավարարման համար «Ջրամբարների վերականգնման և վերազինման» միջոցառման շրջանակներում ջրամբարների անվտանգ շահագործման և դրանցով կայուն ջրամատակարարման ապահովման նպատակով **2027-2029** թվականների յուրաքանչյուր տարվա համար բյուջետային հայտով առաջարկվել էր 1,100,000.0 հազ. դրամ՝ շինարարական աշխատանքների և նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար:

«Շիրակի մարզի Սառնաղբյուրի ջրամբարի պատվարի անվտանգ շահագործման նպատակով՝ հիդրոտեխնիկական կառուցվածքներում ընթացող գործընթացների վտանգավորության աստիճանը պարզելու, դրանից բխող միջոցառումները տարբեր փուլերով իրականացնելու համար համալիր հետազոտությունների իրականացման խորհրդատվական և անհրաժեշտ աշխատանքների նախագծային ծառայությունների ձեռքբերման համար անհրաժեշտ է **23,700.0** հազ.դրամ, որից 2025 թվականին հատկացվել է՝ **18,000.0** հազ.դրամ: 2026 թվականի համար անհրաժեշտ գումարը կազմում է **5,700.0** հազ. դրամ և փորձաքննության ծառայությունների ձեռք բերման համար ևս **1,422.0** հազ.դրամ, ընդամենը՝ **7,122.0** հազար դրամ:

«Տավուշի մարզի Այգեձորի ջրամբարի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունների, հիմնանորոգման ենթակա հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնման և վերազինման աշխատանքների նախագծային ծառայությունների ձեռքբերման համար 2025 թվականին հատկացվել է 3,300.0 հազ.դրամ: 2026 թվականին շինարարական աշխատանքների համար նախատեսվող գումարը կհստակեցվի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման գործընթացի ավարտից հետո: Մոտ 55 մլն դրամ շինարարություն:

2024-2025 թվականների ընթացքում, համաձայն կնքվող պայմանագրի «Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման, «Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք 2 ջրամբարի կառուցման և վերականգնման նպատակով կազմվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր, որոնք անցել են պարզ փորձաքննություն:

2026 թվականին Գեղարքունիք 2 ջրամբարի վերականգնման համար անհրաժեշտ է **47,903.37** հազար դրամ և

Ընդամենը՝ 89,323.215 հազ.դրամ:

Լանջաղբյուր-1 ջրամբարի վերանորոգում:

ՋՕ ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ոռոգման ջրամբարի տարբեր հատվածներում առաջացել են հարամիներ, որը պատճառ է հանդիսանում ջրի կորուստների: Անհրաժեշտ է հիմնովին վերանորոգել ջրամբարը, որի համար նախատեսվում են ուսումնասիրություններ, որի հիման վրա կպատվիրվի

նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման գործընթացներ:

Խիստ մոտավոր հաշվարկներով ջրամբարի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար անհրաժեշտ կլինի շուրջ 5.0 մլն դրամ (նախագիծ, փորձաքննության անցկացում):

Քարահունջի ջրամբարի վերանորոգում:

Քարահունջի ջրամբարը՝ 1270 հազ մ³ տարողությամբ, անհրաժեշտ է վերանորոգել՝ հաշվի առնելով ջրամբարից տեղի ունեցող ֆիլտրացիայի մեծ ծավալները:

Ջրամբարի հենապատի բարձրությունը 6.5 մետր է, երկարությունը՝ 200 մետր: Հենապատի միացումը միմյանց կատարվել է ձյութով, որը տարիների ընթացքում տաքությունից քայքայվել, հալվել է՝ պատճառելով ճաքեր, որից հետո առաջացել է ջրի հոսք՝ ֆիլտրացիա, որն էլ իր հերթին մեծ վնաս է պատճառում Քարահունջ համայնքի որոշ հատվածներում առաջացնելով հողի հոսք:

Ջրամբարի լրիվ լիցքավորված ժամանակ՝ առանց հավելյալ ջրի մուտքի, 10 օրվա ընթացքում մայերեսը իջնում է գրեթե 40 սմ-ով, որը համարժեք է 80000 մ³ ջրի, հողի ընդերքով հասնում է Քարահունջ համայնք: Անսարք վիճակում է գտնվում նաև հիմնական 500մմ-ոց փականը:

Շինարարական աշխատանքների համար պահանջվում է շուրջ 10 մլն դրամ:

Առաջարկվում է՝ 2027թ. համար 1,000,000.0 հազար դրամ, 2028թ.՝ 1,000,000.0 հազար դրամ, 2029թ.՝ 1,000,000.0 հազար դրամ:

3.1.11 Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարում 1017-11001

ՀՀ կառավարության հունվարի 22-ի N 72-Ն որոշման համաձայն «Արփա-Սևան» ԲԲԸ-ի հետ 2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված «Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի ջրային համակարգը հավատարմագրային կառավարման հանձնելու» NՏՁԲ-04/36 հավատարմագրային կառավարման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ը, և որոշմամբ մատուցվող ծառայությունների համար պայմանագրի գինը յուրաքանչյուր տարվա համար սահմանվել է 300,000.0 հազ.դրամ:

Առաջարկվում է 2027-2029թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսել **300,000.0** հազար դրամ:

3.1.12 Արփա-Սևան ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավում 1017-21001

Արփա-Սևան ջրատարը բաղկացած է երկու թունելներից: Կեչուտի ջրամբարից N 1 թունելով Արփա գետի ջուրը տեղափոխվում է Եղեգիսի ջրանցույց և այնտեղից Եղեգիս գետի հոսքի հետ միասին ուղղորդվում է N 2 թունել, որով ջուրը տեղափոխվում է Սևանա լիճ:

Նախատեսված էր թունելով տեղափոխել տարեկան 270 մլն/մ³ ջուր, սակայն «Արփա-Սևան» թունելի տեխնիկական վիճակով պայմանավորված՝ Արփա-Սևան թունելով Սևանա լիճ է տեղափոխվել՝ 2022 թվականին՝ 168.6 մլն խոր.մ, 2023 թվականին՝ 126.8 մլն խոր.մ ջուր և 2024 թվականին՝ շուրջ 188.2 մլն խոր.մ:

2026-2027 թվականներին նախատեսվում են շինարարական աշխատանքներ՝ **2026** թվականի սեպտեմբերի 1-ից մինչև **2027** թվականի մարտի 31-ը, որոնց նախահաշվային արժեքը կազմում է շուրջ **2,080,145.0** հազար դրամ, որոնց համար նախագծանախահաշվային փաստաթղթերը ձեռք են բերվել դեռևս **2025** թվականին և ներկայումս գտնվում են պետական համալիր փորձաքննության փուլում:

N2 թունելի վերանորոգման շինարարական աշխատանքների համար ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով հատկացված՝ 20 մլն դրամ գումարի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել նախագծանախահաշվային փաստաթղթեր (ՆՆՓ), որի համաձայն շինարարական աշխատանքների իրականացումը կնախատեսվի 2027 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2028 թվականի մարտի 31-ը:

Ընդհանուր առմամբ, **2027-2029** թվականների համար կպահանջվի շուրջ **2,120,000.0** հազար դրամ:

3.1.13 Կոլեկտորադրենաժային ծառայություններ 1027-11001

Միջոցառման նպատակն է բարելավել ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը, պահպանել գրունտային ջրերի մակարդակը թույլատրելի խորություններում, կանխարգելել հողատեսքերի երկրորդային աղակալումն ու ալկալիացումը, կանխարգելել տարափոխիկ հիվանդությունների տարածումը և նպաստել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը:

Հանրապետության թվով 7՝ Արարատի, Արմավիրի, Շիրակի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում տեղակայված 1,066.611 կմ ընդհանուր երկարությամբ բաց դրենաժային ցանցից տարեկան մաքրվել է միջինը՝ 310 կմ, այսինքն՝ դրենաժային ցանցերի յուրաքանչյուր բաղադրիչ մաքրվել էր 3-4 տարին մեկ անգամ, միջին տարեկանը՝ 300-340 կմ: Կատարված աշխատանքների շնորհիվ գերխոնավ հողերի տարածքները նվազեցին շուրջ 12.5 հազար հա-ով, 2006թ.-ից մալարիա հիվանդությունը վերացվեց, և զգալիորեն բարձրացավ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը դրենաժի տակ ընկած տարածքներում:

Հանրապետության ոռոգելի հողերում գրունտային ջրերի մակարդակները և դրանց բաշխվածությունն օպտիմալ խորությունների և տարածքների վրա պահպանելու համար յուրաքանչյուր տարի անհրաժեշտ է իրականացնել շուրջ 200-250կմ եչրկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Ընկերությունն իրականացնում է՝

ա/ Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ

բ/ Կոլեկտորադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի հսկողություն, շահագործողական ջրաչափություն, դրենաժային ջրերի որակի որոշման աշխատանքներ

գ/ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

2027 թվականին առաջարկվում է ավելացնել 2026թ. նախատեսված աշխատանքների ծավալները 2 կմ երկարության չափով՝ կապված դրենաժային ցանցերի մաքրման և դրանց վրա առկա կամուր/ խողովականցումների կառուցման կամ վերակառուցման աշխատանքներով պայմանավորված և նախատեսել 353,600.0

հազար դրամ: Նախատեսվում է ՀՀ 4 մարզերում մաքրել և ընթացիկ նորոգել **177 կմ** երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցերը, ինչպես նաև «Մելիորացիա» ՓԲԸ-ի հաշվեկշռում հաշվառված դրենաժային համակարգերի վրա կառուցված և տեխնիկապես շատ վատ վիճակում (որոշները նաև վթարային) գտնվող խողովականցում/կամուրջներում վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքները, որոնք հնարավորություն կտան գրունտային ջրերի մակարդակներն իջեցնել կամ առնվազն պահպանել դրանց նախագծային մակարդակը՝ թույլ չտալ ճահճացման երևույթները, նվազեցնել գերխոնավ հողերի մակերեսները, դրենաժներում ապահովել գրունտային և այլ ջրերի անխափան հոսքը: Կան այնպիսի խողովականցում-կամուրջներ, որոնցում կառուցված խողովակների ջրթողունակությունը չի համապատասխանում դրենաժային համակարգերով հեռացվող ջրի մակարդակին: Մասնավորապես, 1984թ. Պաշարների օետական հանձնաժողովի կողմից սահմանված (որպես անսահմանափակ ժամանակահատվածի համար) թույլատրելի 34.7 մ³/վրկ ջրաքանակի փոխարեն վերջին տարիներին դրենաժային համակարգերով հեռացվում է շուրջ 50 մ³/վրկ և ավել ջուր:

2028թ. նախատեսվում է մաքրել 179 կմ և 2029թ. 181 կմ կոլեկտորադրենաժային ցանց՝ համապատասխանաբար կապահանջվի **356,600.0** հազար դրամ և **362,700.0** հազար դրամ:

3.1.14 Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում 1072-11018

2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված Վարձակալության պայմանագրի համաձայն, Վարձատուն պարտավոր է ձեռքբերել անկախ տեխնիկական աուդիտորի ծառայություններ: Անկախ տեխնիկական աուդիտորը Վարձակալության պայմանագրի Ընդհանուր պայմաններ 6.7.1 կետի համաձայն վարձված ընկերություն կամ անհատն է, որը պետք է անցկացնի Կատարողական Վարձակալության պայմանագիր չափանիշների ապահովման ընթացքի մոնիտորինգ, ինչպես նաև իրականացնի ԸՊ 6.7 և 6.8 կետերում նշված առաջադրանքները:

Ջրային կոմիտեն հանդես է գալիս որպես Վարձատու և որպես Անկախ աուդիտոր ընտրող մարմին:

2017-2021 թվականների համար անկախ տեխնիկական աուդիտ է իրականացրել «Սաշըն Վասըր Ջի Էմ Բի Էյչ» կազմակերպությունը, որը տարեկան կտրվածքով ներկայացրել է աուդիտի հաշվետվություն:

Երեք հաջորդական պայմանագրային տարիներ շարունակ՝ 2022-2025թթ համար տեխնիկական աուդիտի գործառույթը չի իրականացվել՝ պայմանագրի ժամկետը լրանալու և մրցույթային գնման գործընթացում տեխնիկական աուդիտ չընտրելու հիմքով:

Չետագայում, ՀՀ կառավարության 2025 թվականի հուլիսի 10-ի N944-Ա որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 6-րդ կետով սահմանվում է «6. Նպատակ ունենալով լավարկել Վարձակալության պայմանագիրը, ինչպես նաև Անկախ տեխնիկական աուդիտոր վարձելու գործընթացը դարձնել առավել արդյունավետ և պարզ՝ կողմերը համաձայնության են գալիս ուժը կորցրած ճանաչել Վարձակալության պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող 2016 թվականի սեպտեմբերի 23-ի «Հանդիպման արձանագրության» 6-րդ կետը և այդ նպատակով սահմանել Նոր կարգավորումներ, ինչը կհանդիսանա Վարձակալության պայմանագրի անբաժանելի մաս:

6.1 Հիմք ընդունելով Վարձակալության պայմանագրի 6.7.1 (1) կետը՝ կողմերը համաձայնության են գալիս.

1) Անկախ տեխնիկական աուդիտոր վարձելու նպատակով Վարձատուն ինքնուրույն (միանձնյա) կազմակերպում և անցկացնում է բաց մրցույթ, որի արդյունքում պայմանագիր է կնքում հաղթող ճանաչված կազմակերպության հետ:

2) Վարձատուն, ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, կվճարի տեխնիկական աուդիտորական կազմակերպության ծառայությունների ձեռքբերման համար սահմանված վճարը, իսկ Վարձակալը սահմանված վճարին համարժեք կավելացնի հաջորդող տարվա, իսկ պայմանագրի վերջին՝ 2031 թվականի մասով՝ ընթացիկ տարվա համար Վարձակալության պայմանագրի Հավելված 2-ի 4-րդ կետով սահմանված ՊՎԸ ներդրումների գումարին, որոնց համար Վարձակալը կներկայացնի առանձին հաշվետվություն:

Անկախ տեխնիկական աուդիտի ծառայությունների գնման գործընթացի կազմակերպման առանձնահատկություններից ելնելով, մրցույթի կազմակերպման նոր մոտեցումներ կիրառելու նպատակով, ներկայումս, Ջրային կոմիտեն շրջանառության մեջ է դրել «Գնման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները սահմանելու և գնման ընթացակարգի մասնակցության հայտերի ներկայացման հրավերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը:

Որոշման նախագծով նախատեսվում է հաստատել, որ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի կողմից կազմակերպվող բաց մրցույթի նախաորակավորման ընթացակարգի շրջանակում մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները և դրանց գնահատման համար ներկայացվող փաստաթղթերը, գնահատման կարգը, նախաորակավորման մասնակիցների կողմից հայտի, իսկ ընտրված մասնակցի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման չափերը, կանխավճարի մարման կարգը, ինչպես նաև պայմանագրին ներկայացվող հիմնական պայմանները սահմանվում են գնման հայտով:

Ջրային կոմիտեն, որը լիազորված է պայմանագիր կնքել ՀՀ Կառավարության անունից, վերոնշյալ ծրագրի իրականացման ընթացքում մեկնարկել է Անկախ աուդիտ իրականացնելու համար ծառայությունների գնման բաց մրցույթ՝ ներառելով ինչպես տեղական կազմակերպություններին, այնպես էլ միջազգային փորձառու անկախ ընկերությունների և ընկերությունների կոնսորցիումների (այսուհետ՝ Ընկերություն) շրջանակներում: Մրցույթի արդյունքում ընտրված Ընկերության (այսուհետ՝ Անկախ աուդիտոր) հետ ՋԿ-ն, կկնքի աուդիտի պայմանագիր՝ մինչև 2031 թվականի ավարտ:

Տեխնիկական աուդիտի ծառայությունների հիմնական նպատակն է 2022-2025 թվականների համար իրականացնել փաստաթղթային աուդիտ՝ Վարձակալի կողմից տրամադրված նյութերի հիման վրա, ինչպես նաև 2026-2031 թթ համար իրականացնել ՎՊ Հավելված 6-ում ամփոփված կատարողական ցուցանիշների ապահովման ընթացքի մոնիտորինգ, իրականացնել ՎՊ ԸՊ 6.7.1 (1) կետում նշված առաջադրանքները (բացառությամբ (1) կետի (բ) ենթակետի), ինչպես նաև ՎՊ-ի հերթական հինգ տարիներին աուդիտորական ծառայություններ մատուցած ընկերության կողմից Վարձակալի ներկայացրած Բազիսային տարվա տվյալների հաշվետվության ուսումնասիրությունը, անհրաժեշտության դեպքում, համապատասխան հիմնավորման ներկայացմամբ՝ որոշ տվյալների ճշգրտումը: Աուդիտորի՝ ՎՊ ԸՊ 6.7.1(1) կետով նախատեսված

պարտականությունների կապակցությամբ կայացված որոշումները կամ այն լրացուցիչ հանձնարարությունները, որոնց շուրջ Վարձակալը և Վարձատուն կհամաձայնվեն, կլինեն վերջնական և պարտադիր ՎՊ-ի կողմերի համար, և դրանց նկատմամբ չեն կիրառվի ՎՊ ԸՊ 12.4 կետում շարադրված դրույթները:

Անհրաժեշտ է նշել, որ 2031 թվականի՝ վարձակալության պայմանագրի ավարտի համար աուդիտն իրականացվելու է կնքվող պայմանագրի շրջանակներում և ներառվել է այդ ծավալների մեջ:

Աուդիտորը Պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելիս հանդես է գալիս որպես Վարձատուի կողմից վարձված և Ընկերությանը աուդիտորական ծառայություններ մատուցող անկախ աուդիտորական ծառայություններ մատուցող կազմակերպություն: Աուդիտորի հետ իրավահարաբերությունները կարգավորող, նոր կնքվող պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) չի նախատեսում կողմերի միջև որևէ գործակալության, գործընկերության, համատեղ ձեռնարկության կամ այլ իրավաբանական անձի ստեղծում, ինչպես նաև համատեղ գործունեություն ենթադրող այլ համագործակցություն:

Խորհրդատուի մրցութային գործընթացը նախատեսում է մեկնարկել ՀՀ կառավարության որոշման ընդունման պահից, որից հետո նախատեսվում է մինչև հունիս ամիս պայմանագրի շնորհում:

Դեռևս 2017 թվականին Անկախ տեխնիկական աուդիտի ընտրության նպատակով կազմակերպվել էր միջազգային բաց մրցույթ և նախատրակավորման փուլը հաղթահարել էին թվով 5 կազմակերպություններ՝ «ԷյիՋի Սերվիս» ՍՊԸ-ն, «ՍԷՍԹ և «Գրանթ Թորոնթոն», «Քորփորեյթ Սոլյուշնս Բոնասայթինգ» ՍՊԸ-ն, «Ֆիխթեր Ուոթըր» ՍՊԸ-ն, «Ռամբոլ» և «Սաշըն Վոսըր Ջի Եմ Բի Էյչ» ՍՊԸ-ները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Սաշըն Վոսըր Ջի Եմ Բի Էյչ» ընկերության կողմից, որպես ֆինանսական առաջարկ, առաջարկվել է վճարել 200.0 մլն դրամ:

2027 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին անհրաժեշտ կլինի 80 մլն դրամ: Յուրաքանչյուր տարվա համար անհրաժեշտ կլինի 80 մլն դրամ: Ընտրված կազմակերպությունն իրականացնելու է 2022-2025 թվականների համար տեխնիկական աուդիտ, ինչպես նաև 2026 թվականի՝ ընթացիկ տարվա համար տեխնիկական աուդիտ: Հաշվի առնելով, որ աուդիտի ծառայությունները 2026 թվականի համար իրականացվելու է հիբրիդային եղանակով, ծառայությունների ձեռքբերման համար վճարը հնարավոր կլինի կանխատեսել մրցութային գործընթացում հաղթող կազմակերպության ֆինանսական առաջարկը ներկայացնելու պարագայում:

Խորհրդատուի մրցույթի արդյունքների ամփոփումից հետո կհստակեցվեն ցուցանիշները և կներկայացվեն լրացուցիչ տեղեկատվություն առաջիկա տարիների բյուջետային հայտում:

3.1.15 Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում 1072-31008

Այս միջոցառման շրջանակներում նախատեսվում է 2026 թվականին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից ստանալ մոտ 7.2 մլրդ դրամ ընդհանուր արժեքով նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ Երևան քաղաքում և մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ իրականացնելու

նպատակով: Նշված գումարի շրջանակներում պետք է իրականացվի 14 օբյեկտի շինարարություն, որից 7-ը՝ Երևան քաղաքում: Նախատեսվում է մրցութային գործընթացները մեկնարկել 2026 թվականի երկրորդ կիսամյակում, ներգրավել լրացուցիչ ֆինանսական միջոցներ և իրականացնել աշխատանքների մոտ 20 տոկոսը: Իսկ աշխատանքների մնացածը մասը կիրականացվի 2027 թվականին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է **2027 թվականին նախատեսել շուրջ 5,000,000.0 հազար դրամ՝** պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների կառուցման կամ վերակառուցման աշխատանքներն ավարտելու նպատակով:

3.1.16 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում 1072-31010

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Երվադա» ՍՊԸ-ի միջև 2022թ. մարտի 11-ին կնքված «**ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի գոյություն ունեցող ջրի մաքրման կայանի հիմնանորոգման, լրացուցիչ նոր կայանի կառուցման**» աշխատանքների պետական գնման N ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/3/2 ծածկագրով պայմանագրով կապալառուն իրականացնում է ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի գոյություն ունեցող ջրի մաքրման կայանի հիմնանորոգման, լրացուցիչ նոր կայանի կառուցման շինարարական աշխատանքներ: Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները ավարտին հասցնելու համար **2027 թվականին կպահանջվի 175,000.0 հազար դրամ:**

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Ուրցաձոր բնակավայրի և Արարատ համայնքի Արարատ բնակավայրի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում, մասնավորապես՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2020 թվականին Ուրցաձոր և Արարատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը, սակայն մինչ այսօր աշխատանքներն իրականացված չեն: **Ուրցաձոր** բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախահաշվային արժեքը կազմում է 222,000.0 հազար դրամ: Առաջարկում ենք նախատեսել **2027թ.՝ 122,000.0 հազար դրամ, 2028թ.- 100,000.0 հազար դրամ:** **Արարատ** բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախահաշվային արժեքը կազմում է 160,000.0 դրամ: Առաջարկում ենք նախատեսել **2027թ.՝ 100,000.0 հազար դրամ, 2028թ.՝ 60,000.0 հազար դրամ:** Դրական փորձաքննության եզրակացությունը կցվում է:

Ընդամենը միջոցառման համար պահանջվում է. 2027թ.՝ 397,000.0 հազար դրամ, 2028թ.՝ 160,000.0 հազար դրամ:

3.1.17 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի կառուցում 1072-31013

ՀՀ Վայոց ձորի մարզի Գեդիկվանք - Եղեգնաձոր ինքնահոս ջրատարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում և համակարգի կառուցում.

Գեդիկվանքի 7 աղբյուրների դեբետը կազմում է 180-250լ/վ: Զրագծի երկարությունը 39.1 կմ է Կառուցվել է 11.2 կմ երկարությամբ խողովակաշար Վերնաշեն բնակավայրից մինչև Սառնաղբույր-Գողթանիկի սահման, ինչպես նաև պատրաստվել է 23 կմ երկարությամբ հողային հարթակը: Մարզի ընդհանուր ազգաբնակչության մոտ 43%-ը՝

շուրջ 21.0 հազար, կապահովվի շուրջօրյա ջրամատակարարմամբ: Անավարտ թողնված խմելու ջրագծի 27,9կմ հատվածի կառուցումը կապահովի Եղեգնաձոր, Գլաձոր, Վերնաշեն (չսպասարկվող բնակավայր), Մալիշկա բնակավայրերը շուրջօրյա բարձրորակ խմելու ջրով: 70 – 80 լ/վ ջուրը հնարավոր է կուտակել Եղեգնաձոր խոշորացված համայնքի Վերնաշեն բնակավայրում կառուցվող «Վերնաշեն» ջրամբարում: Անավարտ թողնված ջրագծի կառուցումը հնարավորություն է տալիս Վերնաշեն, Գլաձոր, Մալիշկա համայնքներում 800-900 հա անջրդի վարելահողերը դարձնել ջրովի: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 2.42 մլրդ դրամ: Առաջարկում ենք նախատեսել **2027թ.՝ 500,000.0 հազար դրամ/ նախագիծ/, 2028թ.՝ 1,187,000.0 հազար դրամ, 2029թ.՝ 1,187,000.0 հազար դրամ:** Զրագծի երկարությունը կկազմի մոտ L=28կմ D=400-500մմ: Ծրագրի համար մշակվել է հանրային ներդրումային ծրագրի նախագծային փաթեթ, որը առաջիկայում կներկայացվի ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշմանը՝ համաձայն ՀՀ կառավարության 2023թ. «Հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» N 175-Ն որոշմամբ հաստատված դրույթների:

ՀՀ Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքի այլընտրանքային աղբյուրից ջրատարի կառուցում:

Ջրային կոմիտեն 2025թ. ձեռք բերել ՀՀ Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքի այլընտրանքային աղբյուրից ջրատարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի և պարզ փորձաքննության ծառայությունների փաթեթը: Օբյեկտի կառուցման նախահաշվային արժեքը կազմում է **332,560.5 հազար դրամ:** ՀՀ 2026թ. պետական բյուջեով օբյեկտի շինարարության համար հատկացվել է 130,000.0 հազար դրամ: Առաջարկում ենք **2027թ. համար նախատեսել 202,560.5 հազար դրամ:** Դրական փորձաքննության եզրակացությունը կցվում է:

Ընդամենը միջոցառման համար պահանջվում է. 2027թ.՝ 702,560.5 հազար դրամ, 2028թ.՝ 1,187,000.0 հազար դրամ, 2029թ.՝ 1,187,000.0 հազար դրամ:

3.2. Նոր նախաձեռնություններ

3.2.1 Արարատյան ջրավազանի ձկնաբուծական տնտեսությունների ելքային ջրերի վերաօգտագործման ծրագիր 1004-11014

«Արարատյան դաշտի արտեզյան ավազանի պահպանության և հետադարձ ջրերի վերաօգտագործման իրագործելիության ուսումնասիրության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մատուցման սույն առաջադրանքի նպատակն է իրականացնել Արարատյան դաշտի Ջրային ռեսուրսների և ՀՏԿ-ների գնահատում, առաջարկել Արարատյան դաշտի արտեզյան ավազանից արտահոսող ջրերի վերաօգտագործման հնարավորություններն ու մշակել տեխնիկա-տնտեսական հիմանավորում մասնավորապես՝

Առաջադրանք 1՝ Արարատյան դաշտի ջրային հաշվեկշռի կազմում

- Ուսումնասիրել, հավաքագրել տվյալներ և գնահատել Արարատյան դաշտի ջրային ռեսուրսները (ստորերկրյա ջրավազան, գետեր, լճեր, աղբյուրներ),

- Հստակեցնել հողատարածքների ոռոգման ջրադրյուրները,
- Ներկա և հեռանկարային ջրապահանջարկի հաշվարկման նպատակով ճշգրտել համայնքների գյուղատնտեսական հողային ֆոնդի տվյալները, ինքնահոս և մեխանիկական եղանակով ոռոգվող ու հնարավոր ոռոգելի դարձվելիք հողատարածքների մակերեսները ու դրանց վրա աճեցվող մշակաբույսերի կազմը՝ համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Հաշվարկել ոռոգման նորմերին ու ռեժիմներին համապատասխան, ճշտված ոռոգելի հողատարածքների ջրապահանջարկը՝ 50%, 75%, 95% ջրապահովվածություն տարվա համար:
- Հաշվել ոռոգման ջրապահանջարկը (ներկա և հեռանկարային):
- Գնահատել կլիմայի փոփոխության ազդեցությունը Ծրագրի տարածքի ջրային ռեսուրսների վրա:

Առաջադրանք 2՝ Արարատյան դաշտի հետադարձ ջրերի ուսումնասիրություն և գնահատում

- Ձեռք բերել, ուսումնասիրել, վերլուծել և գնահատել ստորերկյա ջրավազանից գետեր և կոլեկտորադրենաժային ցանց արտահոսող ջրերի քանակական և որակական տվյալները՝ ըստ ամիսների:
- Ջրի կրկնակի օգտագործման նպատակով ուսումնասիրել և գնահատել Արարատյան դաշտից գետերով և կոլեկտորադրենաժային ցանցով հետադարձ ջրերի հնարավոր քանակությունը:
- Գնահատել ոռոգման սեզոնին Արարատյան դաշտից ջրի արտահոսքի/ ձկնաբուծարանների հետադարձ ջրերի կրկնակի օգտագործման հնարավորությունը և ծավալները:
- Դիտարկել հետադարձ ջրերի վերաօգտագործման հնարավորությունը, որոշել քանակն ու ջրի կուտակման տեղերը:

Առաջադրանք 3՝ Հետադարձ ջրերի տեղափոխման ձևի և սխեմաների կազմում

- Արարատյան դաշտի ստորերկրյա ջրավազանի գրունտային ջրատար շերտի լիցքավորման նպատակով՝ որոշել հորերի հնարավոր տեղերը, հետադարձ ջրերի վերադարձման հնարավոր քանակությունը և քարտեզագրել:
- Հետադարձ ջրերի վերադարձման հնարավոր քանակության տեղափոխման ձևի և սխեմաների կազմում, կուտակման տեղերի որոշում և քարտեզագրում:
- Հաշվարկված ոռոգման ջրապահանջարկի հիման վրա՝ հաշվարկել ջրատնտեսական հաշվարկներով ջրապահանջարկի լիարժեք ծածկմանը բավարարող ջրամբարի ընդհանուր և օգտակար ծավալները:
- Ուսումնասիրել Ծրագրի տարածքի ՀՏԿ-ների (ջրամբար, ՕԿՁ, ինքնահոս ջրանցքներ և խողովակաշարեր) գույքագրման և տեխնիկական վիճակի գնահատման առկա թարմ տեղեկատվությունը, բացակայության պարագայում կամ անհրաժեշտության դեպքում կատարել նոր գույքագրում և տեխնիկական վիճակի գնահատում, որի հիման վրա ներկայացնել լուծումներ (ներառյալ ներդրումային ծախսերի խոշորացված, ոչ

նախահաշվային մակարդակի գնահատումը) Արարատյան դաշտի հողատարածքների առավել հուսալի ոռոգման համար (առկա ՀՏԿ-ների վերակառուցում, վերազինում և/կամ նոր ՀՏԿ- ների կառուցում):

- Կատարել առկա ոռոգման ենթակառուցվածքների և դաշտային պայմաններում կիրառվող մեթոդների ու սարքավորումների գույքագրում, ինչպես նաև տեխնիկական վիճակի վերլուծություն և սխեմատիկ քարտեզի վրա ներկայացնել ոռոգման ամբողջական համակարգը (ջրառ հանգույցներ, ջրանցքներ, պ/կ-ներ, մոտեցնող և մղման խողովակաշարեր, ինքնահոս համակարգ, ներտնտեսային ցանցի միացման հանգույցներ և այլն):
- Անհրաժշտության դեպքում գույքագրել և գնահատել Արարատյան դաշտում կոլեկտորադրենաժային ցանցի Հրազդան և Մեծամոր գետերի համակարգում շահագործվող պոմպակայանները:
- Արարատյան դաշտի պոմպակայանների վիճակի գնահատման արդյունքում ներկայացնել արդիականացման և վերազինման նպատակով անհրաժեշտ խոշորացված, ոչ նախահաշվային մակարդակի ներդրումները, դրանց արդյունավետության բարձրացման համար առաջարկել նորագույն տեխնոլոգիաներ՝ նոր արդյունավետ պոմպեր, հնարավորության դեպքում օգտագործելով արևային էներգիա, ոռոգման փակ համակարգ՝ նվազեցնելով ջրի կորուստները և այլն:
- Գնահատել Արարատյան դաշտում կոլեկտորադրենաժային ցանցի, Հրազդան և Մեծամոր գետերի համակարգում ձկնաբուծական տնտեսությունների ելքային ջրերի վերաօգտագործման համար նոր պոմպակայանների կառուցման հնարավորություններն ու լուծումները՝ արևային էներգիայի օգտագործմամբ:
- Մշակել փոքր, լրկալ պոմպակայանների տիպային նախագիծ (կոնցեպտ, էսքիզային մակարդակում) և խոշորացված, ոչ նախահաշվային մակարդակի գնահատում՝ արևային էներգիայի կիրառության և Արարատյան արտեզյան ավազանի տարբեր տեղամասերում տեղայնացման բարձր հնարավորությամբ:

Առաջադրանք 4՝ Ծրագրի տեխնիկատնտեսական հաշվարկների կազմում Գնահատել

Ծրագրի պոտենցիալ ազդեցությունը ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման, մշակաբույսերի արտադրողականության ավելացման, բարձրարժեք մշակաբույսերի անցման վրա:

- Ուսումնասիրել և հաստատել ծրագրի կենսունակությունը: Իրականացնել ծրագրի օգուտ-ծախս վերլուծություն և գնահատել Ծրագրի ֆինանսական ազդեցությունը, որոշել ֆինանսական ներքին եկամտաբերության նորման («IRR») և ներդրումների եկամտաբերության տնտեսական նորման («EIRR»):
- Խորհրդատուն պետք է գնահատի պահանջարկի ռիսկերը և հասկանա, թե արդյո՞ք նոր կառուցված և/կամ վերանորոգված ջրամատակարարման և ջրի կուտակման ենթակառուցվածքները բավարար պահանջարկ կունենան անհատ ֆերմերների կողմից, որը թույլ կտա հիմնավորել Ծրագրի և սույն Առաջադրանքի իրականացման անհրաժեշտությունը տնտեսական տեսանկյունից:

- Արարատյան դաշտից արտահոսող ջրերի կրկնակի օգտագործմամբ պայմանավորված ուսումնասիրել, գնահատել և ներկայացնել առաջարկ Սևանա լճից ջրի բացթողումների կրճատման քանակի վերաբերյալ:
- Կազմել Ծրագրի իրականացման ժամանակացույցը և առաջնահերթ միջոցառումները:

Ակնկալվում է նաև վերլուծված և հիմնավորված նախնական լուծումներ՝ ելքային ջրերի ինքնահոս օգտագործման և/կամ փոքր հզորությամբ արևային էներգիայով աշխատող պոմպակայանների միջոցով օգտագործման ուղղություններով: Ակնկալվում է, որ 2026թ.-ին խորհրդատվական ծառայության ուսումնասիրությունների արդյունքներով կնախատեսվեն ներդրումային ծրագրեր:

2027-2029թթ.-ի յուրաքանչյուր տարվա համար՝ 150,000.0 հազար դրամ:

«Կառավարությունը 2014թ.-ից սկսած տարբեր միջոցառումներ է իրականացրում ստորերկրյա ջրերի արդյունավետ կառավարման ուղղությամբ: Այդ միջոցառումները հիմնված են մի շարք տեխնիկական, օրենսդրական և ինստիտուցիոնալ առաջարկությունների վրա, որ տրվել էին ԱՄՆ ՄԶԳ «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի շրջանակներում 2014թ. պատրաստված «Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների գնահատման ուսումնասիրություն» և ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ ծրագրի շրջանակներում 2016թ. պատրաստված «Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում. ձկնաբուծության ոլորտի դերը» զեկույցների մեջ, ինչպես նաև Արարատյան դաշտի հորատանցքերի, բնական աղբյուրների և ձկնային տնտեսությունների գույքագրման և հաշվառման արդյունքների վրա:

Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) Ջրային կոմիտեի հետ համագործակցության շրջանակներում ապահովել է 225 000 ԱՄՆ դոլար ֆինանսական միջոցների տեխնիկական աջակցության հնարավորություն՝ Հայաստանի Հանրապետության Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսների կառավարման ուժեղացման նպատակով՝ հիմնական շեշտը դնելով հատկապես ձկնաբուծարաններից դուրս եկող ջրերը ոռոգման նպատակով վերաօգտագործման հնարավորությունների գնահատման և այդ նպատակին հասնելուն միտված հիմնավոր առաջարկությունների մշակման վրա:

«ՏԿԵՆ-ի կողմից համապատասխան գրություն է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն (ՖՆ)՝ 225 000 ԱՄՆ դոլար տեխնիկական աջակցության ծրագրի իրականացմանը նպատակաուղղելու հարցում ՖՆ-ի համաձայնությունն ստանալու ուղղությամբ, որի արդյունքներն անհրաժեշտ հիմքեր կապահովեն «Արարատյան ջրավազանի ձկնաբուծական տնտեսությունների ելքային ջրերի վերաօգտագործման ծրագրի» ներդրումային բաղադրիչի մշակման և իրականացման համար:

«Իշյալ միջոցների տեխնիկական աջակցության տրամադրման վերաբերյալ ՖՆ-ն իր իրավասությունների շրջանակում առարկություններ չի ներկայացրել, նիկնույն ժամանակ առաջարկելով, դիտարկել այն հանգամանքը, որ ԱԶԲ-ի կողմից տեխնիկական ուսումնասիրությունների իրականացման համար ֆինանսական միջոցների տրամադրումը չի կապակցվելու պարտադիր վարկային միջոցներ վերցնելու պայմանի հետ՝ հաշվի առնելով ՀՀ պետական բյուջեի ֆիսկալ հնարավորություններն ու միջացառումների իրականացման առաջնահերթությունները:

2026թ. բյուջետային գործընթացի շրջանակներում (նաև 2027-2028թթ. համար) ՀՀ ՏԿԵՆ-ի կողմից 2028թ.-ի համար ներկայացվել է «Արարատյան ջրավազանի ձկնաբուծական տնտեսությունների ելքային ջրերի վերաօգտագործման ծրագիր»

միջոցառման գծով **150,000,000 ՀՀ դրամ** նախատեսելու հայտ, որը, սակայն, չի ընդգրկվել 2026թ. պետական բյուջեի (նաև 2027-2028թթ. համար) նախագծի՝ ներկայումս քննարկվող տարբերակի՝ ՀՀ ֆինանսների նախարարության 2028թ.-ի առաջարկում՝ միջոցների նախատեսման իրավական հիմքերի բացակայությամբ պայմանավորված:

3.2.2 Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հայտարարագրերի կազմում և փորձաքննության անցկացում 1004-11016

Անվտանգության հայտարարագիրը ՀՏԿ-ի /հիդրոտեխնիկական կառուցվածք/ անվտանգության չափանիշների համապատասխանության մասին տեղեկություններ պարունակող հիմնական պաշտոնական փաստաթուղթն է: Այն ՀՏԿ-ների համար, որոնց վթարը կարող է հանգեցնել արտակարգ իրավիճակների առաջացման, ներկայացվում են անվտանգության հայտարարագրեր՝ ՀՏԿ-ները նախագծելու, շինարարության, օգտագործման հանձնելու, օգտագործման, օգտագործումից հանելու, վերակառուցումից կամ հիմնանորոգումից հետո գործողության մեջ դնելու, ինչպես նաև գործունեության ժամանակավոր դադարեցման կամ գործունեությունից դուրս բերված ՀՏԿ-ի տնտեսական գործունեության ոլորտ ներգրավման դեպքում: Այդպիսիք են 300 հազ. խոր. մ ու ավելի ծավալ և (կամ) 10 մ ու ավելի բարձրությամբ պատվար ունեցող ջրամբարները, հիդրոտեխնիկական թունելները և խոշոր պոմպակայանները:

Ջրային կոմիտեի համակարգման կազմակերպությունների (Ջրառ ՓԲԸ, ԶՕԸ-եր) սպասարկման և շահագործման տակ գտնվող շուրջ 90 հիդրոտեխնիկական կառուցվածքներից (ջրամբարներ, պոմպակայաններ) 45-ի համար (առավել բարձր ռիսկայնություն ունեցող ՀՏԿ-ներ) նախատեսվում է մշակել անվտանգության հայտարարագրեր և անցկացնել փորձաքննություն:

Առաջարկվում է.

2027 թվականի համար – թվով 15 ՀՏԿ՝ շուրջ 200.0 մլն. դրամ,

2028 թվականի համար – թվով 15 ՀՏԿ՝ շուրջ 200.0 մլն. դրամ

2029 թվականի համար - թվով 15 ՀՏԿ՝ շուրջ 200.0 մլն. դրամ

Աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:

ՀՏԿ-ի անվտանգության հայտարարագրի կազմման ընթացքում անհրաժեշտ է նկատի ունենալ ՀՏԿ-ի մասին տվյալների լիարժեքությունը և հավաստիությունը, վտանգի աստիճանի բազմակողմանի բացահայտման և հնարավոր վթարների ու վնասվածքների վերացման մեխանիզմի մշակումը, վերլուծության ընթացքում կիրառված մեթոդների հիմնավորվածությունը, հնարավոր ռիսկի գնահատման բովանդակությունը և ՀՏԿ-ի անվտանգության աստիճանը, անվտանգության գնահատման արդյունքների վրա ազդող գործոնների վերլուծությունը, անվտանգության ապահովման նպատակով իրականացվող և պլանավորվող միջոցառումների արդյունավետությունը և բավարարումը: ՀՏԿ-ի անվտանգության հայտարարագիրը պետք է ներառի ընդհանուր տեղեկություններ ՀՏԿ-ի տեխնիկական տվյալների և դրանց տեղաբաշխման տարածքի պայմանների նկարագրության, անվտանգության պայմանների ապահովման միջոցառումների վերաբերյալ, որոնք նախատեսված են նախագծման և օգտագործման կանոններում: Տեղեկությունները ներառում են նաև ՀՏԿ-ի օգտագործման ապահովության վերլուծությունը և գնահատականը՝ ներառյալ հնարավոր վտանգի աղբյուրների որոշումը, տեղեկություններ

սեփականատիրոջ և օգտագործող կազմակերպության, այդ թվում՝ վերջինիս մասնագիտական փորձի ու տեխնիկական հագեցվածության ապահովման մասին, ինչը կարող է ապահովել վտանգների և վթարային իրադրությունների տեղայնացումը և կանխարգելումը, տեղեկատվություն ՀՏԿ-ի փլուզման հետևանքով առաջացող ջրհեղեղների և տարածքների ջրածածկումների կանխատեսումների տեղեկատվական համակարգի մասին, վերլուծություն, որը կրնդգրկի առանձին ՀՏԿ-ների և հիդրոտեխնիկական համալիր օբյեկտների անվտանգության մակարդակի գնահատականը, ինչպես նաև անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը:

Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հայտարարագրերի կազմումը և փորձաքննության անցկացումը կարևորագույն միջոցառում է, որը իրականացվում է այն ՀՏԿ-ների համար, որոնց վթարը կարող է հանգեցնել արտակարգ իրավիճակների առաջացման:

Տվյալ միջոցառման համար իրավական հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 31-ի թիվ 957-Ն որոշումը՝ Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հայտարարագրի բովանդակությունը, դրա մշակման և փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին:

3.2.3 Ոռոգման համակարգերի չափագրում և վկայականների ձեռքբերում 1004-11017

Նոր և վերակառուցվող ոռոգման համակարգերի և օրվա կարգավորման ջրամբարների կառուցման արդյունքում ջրային համակարգերի չափագրման համար անհրաժեշտ է 2,000.0 հազար դրամ:

3.2.4 Ոռոգման պոմպակայանների էներգաարդյունավետությունն ու էներգախնայողությունը բարձրացնելուն ուղղված միջոցառումների ուսումնասիրման ծառայությունների ձեռքբերում, 1004-11018

Ջրօգտագործող ընկերությունների սպասարկման և շահագործման տակ գտնվող շուրջ 170 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի նվազեցման համար անհրաժեշտ է ուսումնասիրել և պարզել պոմպակայանները արևային ֆոտովոլտային կայաններով կահավորելու և/կամ էներգաարդյունավետ տեխնոլոգիաներով վերազինելու նպատակահարմարությունը, որի համար 2027թ. կպահանջվի 100,000.0 հազար դրամ:

3.2.10 Հեր –Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցում 1004-31010

2019 թվականին սկսվել է ՀՀ Վայոց ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարի ոռոգման ջրթողից ինքնահոս ջրատարի կառուցում> ծրագրի գործընթացը: Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար գումարներ են հատկացվել ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1614-Ն և 2020 թվականի ապրիլի 16-ի N 566-Ն որոշումներով, որի արժեքը կազմել է 58,0 մլն դրամ: Ըստ ձեռք բերված նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ շինարարական աշխատանքների ընդհանուր գումարը կազմում է 10714.7 մլն դրամ:

2024 թվականի ՀՀ պետական բյուջեի ամփոփ քննարկման ժամանակ «ՀՀ Վայոց ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցման ծրագիրը» չի ներառվել ՀՀ 2024 թվականի ՀՀ պետական բյուջեում և առաջարկվել է Հեր-Հերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցման նպատակով Ծրագրի իրականացման նպատակահարմարության և արդյունավետության վերաբերյալ կազմել հանրային ներդրումային ծրագրի փաթեթ: Ջրային կոմիտե ՀՀ Վարչապետի այցելության ժամանակ հանձնարարվել է, որ մշակել և հանրային ներդրումային կոմիտեի նիստի քննարկմանը ներկայացնել ներդրումային ծրագրի փաթեթ:

Ծրագրի իրականացման համար տեղի են ունեցել քննարկումներ, այդ թվում նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում, տեղում՝ Հեր-Հերի ջրամբարի տարածքում իրականացվել են ուսումնասիրություններ:

ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականների հիման վրա՝ շահագրգիռ կողմերի քննարկումների արդյունքներով վերջնականացվել է «Հեր-Հերի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցման ծրագրի ներդրումային փաթեթը:

Ծրագիրը մշակվել է ՀՀ կառավարության 09.02.2023թ-ի N 175-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

Առաջիկայում կներկայացվի Հանրային ներդրումային կոմիտեի նիստի քննարկմանը: Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է ընտրել Խորհրդատու, որը, առկա նախագծանախահաշվային փաստաթղթերի արդյունքներով և նոր տեխնիկական լուծումներով կիրականացնի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն և արդյունքների հիման վրա կմշակի նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ ընդգրկելով ոչ միայն առկա ոռոգելի հողատարածքների կայուն ջրամատակարարումը, այլ նաև նոր ոռոգելի հողատարածքների ընդլայնումը, ինչը կբարձրացնի Ծրագրի տնտեսական արդյունավետությունը: Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և տեխնիկատնտեսական ուսումնասիրությունները նախատեսվում է իրականացնել 2027 թվականին, որի համար կպահանջվի **200,0 մլն դրամ**:

3.2.6 Սելավ-Մաստարա N 4 ջրամբարի կառուցում 1004-31019

Սելավ-Մաստարա N 4 ջրամբարը հանդիսանում է Մաստարա սելավատարի վրա դեռևս Խորհրդային ժամանակներից նախատեսված թվով 5 ջրամբարներից (Սելավ-Մաստարա N1, Սելավ-Մաստարա N2, Մյասնիկյանի, Սելավ-Մաստարա N3, և Սելավ-Մաստարա N4) ամենաստորին հատվածում նախատեսված ջրամբարը՝ շուրջ 10 մլն խմ ծավալով:

Ի տարբերություն մյուս 4 ջրամբարների, որոնց վերաբերյալ հիմնավոր ուսումնասիրությունները կամ բացակայում են, կամ խիստ նախնական և սահմանափակ բնույթ ունեն, Սելավ-Մաստարա N4 ջրամբարի համար դեռևս 2016-2018թթ-երին Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվել է մանրամասը հետազոտություն, տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ և առկա է մշակված նախնական նախագիծ: Աշխատանքներն իրականացվել են տվյալ ժամանակահատվածում գործող Ջրային տնտեսության ԾԻԳ ՊՀ-ի կողմից և արդյունքները հասանելի են: Ունենալով նման ծավալի ժամանակակից հետազոտություն, Ջրային կոմիտեն նպատակահարմար է գտնում իրացնել այն և դրա հիման վրա զարգացնել Սելավ-

Մաստարա N4 ջրամբարի կառուցման ծրագիրը՝ ներգրավելով վարկային միջոցներ Կայունության և զարգացման եվրասիական հիմնադրամից, որպես ծրագրի 2016-2018թթ. փուլի դոնոր կառույցի:

Պարզաբանում 1. Սելավ-Մաստարա N4 ջրամբարի կառուցման ծրագիրը ներառված է ՀՀ կառավարության 2021-2026թթ-երի գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված 15 ջրամբարների ցանկում և չի ներառվել ու չի քննարկվել ԵՄ 2.6 մլրդ եվրո ֆինանսական աջակցության շրջանակներում ներկայացված 17 ջրամբարների կառուցման ծրագրերի շրջանակներում:

Պարզաբանում 2. ՀՀ կառավարության 2021-2026թթ-երի գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված 15 ջրամբարների ցանկում ներառված է Սելավ-Մաստարա ջրամբարը, որի տեղադիրքի նկարագրության իդենտիֆիկացմամբ հստակ է, որ այն վերը նկարագրված ջրամբարներից ամենավերին նիշում տեղակայվելիք Սելավ-Մաստարա N1 ջրամբարն է: Այս ջրամբարի կառուցման նպատակահարմարությունը դեռևս պետք է հիմնավորվի կամ հերքվի առաջիկայում ՎՋԵԲ-ի կողմից նախատեսվող մանրամասը տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների արդյունքներով:

Այլ կերպ ասած, ունենալով արդեն իսկ ուսումնասիրված և կառուցման նպատակահարմարությունը հիմնավորված ու նախնական նախագիծ ունեցող Սելավ-Մաստարա N4 ջրամբարը, առնվազն շոայլություն է այն անտեսելը և հետագա կառուցման ընթացք չտալը այն պարագայում, երբ ջրամբարաշինությունը դիտարկվել է որպես ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեության առաջանահերթ ուղղություններից մեկը:

Հաշվի առնելով վերը ներկայացված հանգամանքները, 2023թ-ի հոկտեմբեր ամսին ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի կողմից ծրագիրը ներկայացվել է Հանրային ներդրումային կոմիտեում և ստացել հաստատում, ինչը հիմք ընդունելով, Ջրային կոմիտեն նախատեսել է Սելավ-Մաստարա N4 ջրամբարի մանրամասը նախագծման և կառուցման ծրագիրը ներառել 2027-2029թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագրում՝ նկատի ունենալով համապատասխան վարկային միջոցների ներգրավում Կայունության և զարգացման եվրասիական հիմնադրամից:

Ծրագրի իրականացման համար պլանավորվել է հետևյալ նախնական խոշորացված հաշվարկը. 2027թ. - 291,714.2 հազար դրամ (մանրամասն աշխատանքային նախագծի մշակում), 2028թ. - 901,205.1 հազար դրամ (շինարարություն), 2029թ. - 848,046.1 հազար դրամ (շինարարություն):

Առաջարկվում է 2027թ-ի համար՝ 100,000.0 հազար դրամ, 2028թ-ի համար՝ 100,000.0 հազար դրամ, 2029թ-ի համար՝ 291,708.2 հազար դրամ:

(Այս մոտավոր հաշվարկների համար հիմք են ընդունվել նախնական նախագծման նախահաշվային արժեքները, որոնք 2023թ-ի ինդեքսավորմամբ կազմել են շուրջ 16.8 մլրդ դրամ):

Մատուցվող ծառայությունների և շահառուների շրջանակը.

Ծրագրի շահառուները ջրամբարի իշխման տարածքում հողամշակությամբ զբաղվող ֆերմերներն են, որոնք ոռոգման ջուր կստանան ժամանակակից եղանակով և անհրաժեշտ ծավալով:

Ապագայում, երբ ԶՕԸ-ներն իրենք սահմանեն մատակարարվող ջրի սակագինը, ֆերմերները նաև օգուտ կունենան՝ էլեկտրաէներգիայի պահանջի նվազման և ոռոգման համակարգերի շահագործման ու պահպանման ծախսերի կրճատման շնորհիվ:

Շահառուների ենթադրվող թիվը կազմում է 15500 մարդ (4432 տնտեսություն): Այստեղ ընդգրկված են ֆերմերները (անմիջական շահառուներ) և նրանց ընտանիքի անդամները:

Շահառուներն են նաև ջրամատակարար կազմակերպությունները, այդ թվում՝ «Ջրառ» ՓԲԸ-ն, «Արմավիր» և «Շենիկ» ԶՕԸ-ներն ու Զրային կոմիտեն:

Նպատակը

Ծրագրի իրականացման առաջնային նպատակն է ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը՝ ջրային ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը: Զրամբարի կառուցումը մեխանիկական ոռոգումից ինքնահոսի անցման հնարավորություն կտա, որը կհանգեցնի էլեկտրաէներգիայի խնայողության և ջրի ինքնարժեքի նվազման: Հուսալի ջրամատակարարումը հնարավորություն կտա ավելացնելու ոռոգելի տարածքները և մշակելու տնտեսապես ավելի եկամտաբեր մշակաբույսեր ՀՀ Արմավիրի մարզի 6 համայնքներում:

Նկարագրությունը

Մաստարայի ջրամբարի կառուցմամբ պետական իրավասու մարմինը ձգտում է.

- մեղմել կլիմայի փոփոխության հետևանքները և Արարատյան դաշտի սակավաջրությունը՝ ապահովելով հուսալի ոռոգում,
- կրճատել ոռոգման ջրամատակարարման ծախսերը և հասնել ծախսաձածկման՝ կրճատելով ՀՀ պետական բյուջեից տարեկան տրամադրվող սուբսիդիայի գումարը,
- ընդարձակել ոռոգելի հողատարածքները՝ ներառելով նաև նոր հողատարածքներ,
- բարձրացնել գյուղատնտեսական մթերքների արտադրության քանակը՝ ապահովելով եկամուտների կայուն աճ:

Օգուտներ

Մաստարա ջրամբարի կառուցման ծրագրից ակնկալվող արդյունքներն են՝

- էլեկտրաէներգիայի զգալի խնայողություններ (մոտ 1.5 մլն կվտ. ժամ) խորքային հորերի չշահագործման արդյունքում,
- պահպանման ծախսերի կրճատում՝ պոմպերով ոռոգումից դեպի ինքնահոս ոռոգում անցնելու միջոցով,
- Արարատյան ստորգետնյա ավազանից ջրառը պակասեցնել տարեկան շուրջ 3.3 մլն մ³-ով,
- Սելավ Մաստարա գետի հոսքի կարգավորում, որը հնարավորություն կտա խուսափել վարարումների վատ հետևանքներից՝ զգալի կերպով նվազեցնելով/վերացնելով ներքին հոսքերի առափնյա տարածությունների ավերածությունները,
- ոռոգվող հողերի ավելացում,
- հուսալի ջրամատակարարման և արդյունավետ ոռոգման շնորհիվ գյուղատնտեսական արտադրողականության բարելավում և եկամտի աճ:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 6 տարվա ընթացքում և շահագործման առաջին իսկ տարիներից տեսանելի կլինեն արդյունքները՝ ապահովելով տարեկան հաստատուն եկամուտներ (3-րդ տարում արդեն 2.1 մլրդ ՀՀ դրամ, 8-րդ տարվանից՝ 3.7 մլրդ ՀՀ դրամ):

Մաստարայի ջրամբարի կառուցումը թույլ կտա ապահովել ինքնահոս ոռոգման ջրի երաշխավորված ծավալ՝ ցածր ինքնարժեքով, որն իր հերթին թույլ կտա ընդլայնել ինքնահոս ոռոգվող տարածքի մակերեսը, ավելացնել գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները և գյուղական բնակչության եկամուտը, ինչպես նաև բացառել բնակավայրերի և ենթակառուցվածքների հեղեղվելու վտանգը:

Ջրամբարի կառուցումը թույլ կտա կրճատել տարեկան էլեկտրաէներգիայի ծախսերը: Ինքնահոս ոռոգման անցնելու դեպքում հնարավոր կլինի հրաժարվել խորքային հորերի պոմպերից՝ արդյունքում կրճատելով շահագործման ծախսերը և նվազեցնելով Արարատյան դաշտավայրի ստորգետնյա ջրերի ավազանից տարեկան ջրառը, միաժամանակ կբարձրանա ՋՕԸ-ների աշխատանքի արդյունավետությունը:

Արդյունքային ցուցանիշներ

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է՝

- 3708 հա փաստացի ոռոգվող տարածքների ջրապահովման մակարդակի բարձրացում,
- առկա մեխանիկական ոռոգումն ամբողջությամբ կփոխարինվի ինքնահոսի, ինչի արդյունքում կդադարեցվի 42 խորքային հորերի և Մյասնիկյան համայնքի տարածքում 9 պոմպային ագրեգատների շահագործումը,
- տարեկան կխնայվի մինչև 3 մլն մ³ գրունտային ջուր,
- տարեկան կխնայվի մոտ 1.9 մլն կՎտ.ժամ էլեկտրաէներգիա,
- Արմավիրի մարզի 6 շահառու համայնքներում լրացուցիչ կոռոգվի 675 հա ներկայումս ջրի սակավության պատճառով անմշակ հող:

Ջրամբարի կառուցման և ներտնտեսային համակարգի արդիականացման շնորհիվ էլեկտրաէներգիայի և շահագործման ծախսերը, ինչպես նաև ջրամատակարարող կազմակերպությունների սպասարկման ծախսերը կկրճատվեն, ինչը կարող է ստեղծել ջրի տնտեսական արժեքի (ինքնարժեքի) նվազման միտում, միաժամանակ բարձրացնելով ոռոգելի հողերի ջրապահովվածության մակարդակը:

Զֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները

Ծրագրի չիրականացման դեպքում ոռոգվող տարածքում ջրապահովվածության, արդյունքում՝ բերքատվության և հողօգտագործողների եկամուտների մակարդակը կմնա ցածր, ջրի ինքնարժեքը՝ բարձր (մեխանիկական եղանակով ոռոգման պատճառով), էլեկտրաէներգիայի գնի տարեցտարի բարձրացման հետ կաճի նաև ջրի ինքնարժեքը, արդյունքում՝ «Վ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիան, ներկայումս չոռոգվող հողատարածքները կշարունակեն մնալ անմշակ, ջրանցքների վատթար վիճակի պատճառով ջրակորուստներն աստիճանաբար կմեծանան, ՋՕԸ-ները կշարունակեն ծախսել լրացուցիչ գումարներ համակարգի շահագործման, պահպանման և ջրի բաշխման համար:

Չափազանց կարևոր հանգամանք է նաև այն, որ, ինչպես վերը նշվեց, Մաստարայի ջրամբարում կուտակվելու են Սելավ Մաստարա հեղեղատարում և Ախուրյան գետում ոռոգման շրջանից դուրս ձևավորվող ջրային ռեսուրսները, և ծրագրի չիրականացման դեպքում գարնան ամիսներին ձևավորվող ազատ հուսքն ամբարելու և ոռոգման շրջանում առաջացող ջրի դեֆիցիտը մեղմելու փոխարեն այդ հոսքը կշարունակի դուրս հոսել երկրից, միաժամանակ սելավային լուրջ վտանգ ստեղծելով/հանդիսանալով բնակավայրերի և ենթակառուցվածքների համար:

Առանց Ծրագրի իրականացման՝ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, մասնավորապես, կունենանք.

- անբավարար ջրամատակարարում շուրջ 3700 հա հողատարածքների համար,
- լքված/չմշակվող հողատարածքներ՝ 675 հա,
- կլիմայի փոփոխությամբ պայմանավորված կբարձրանա մշակաբուսերի ջրապահանջը, իսկ Արաքս գետի վտակների վրա Թուրքիայի կողմից իրականացվող ջրամբարաշինության հետևանքով կպակասեն նաև ջրային ռեսուրսներ, որի հետևանքով

- կունենանք ջրային ռեսուրսների զգալի պակասորդԱրդյունքում կնվազեն ինչպես մշակվող հողատարածքները, այնպես էլ՝ ոռոգվող հողերի ջրապահովվածությունը,
- ջրասակավության և ջրի պակասորդի բացասական ազդեցությունը մասնակի մեղմելու նպատակով ստիպված կլինենք ավելացնել Արարատյան ստորգետնյա ավազանից ջրառը (ռազմավարական պաշարներ),
- ցածր բերքատվության, եկամտաբեր մշակաբույսերով հողատարածքների կրճատում,
- Սելավ Մաստարա հեղեղատարի վարարումների բացասական ազդեցություն՝ բնակավայրերի հողատարածքների ջրածածկում, լվացումներ և փլուզումներ,
- տարեկան սուբսիդիաներ ՀՀ պետական բյուջեից: Ներկայիս 11 դրամ հաստատագրված սակագնի դիմաց ոռոգման ջրամատակարարման փաստացի ինքնարժեքը կազմում է մոտ 25 դրամ, տարբերությունը սուբսիդավորվում է ՀՀ պետական բյուջեից,
- պոմպակայանների և խորքային հորերի ծախսատար շահագործում և պահպանում՝ տարեկան շուրջ 112 մլն դրամ:
- ոռոգման համակարգում ջրակորուստների ավելացում:

Առանց ծրագրի իրականացման վերոնշյալ բացասական ազդեցությունները միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում աճելու են: Արդյունքում կունենանք ոռոգելի տարածքների կրճատում, բերքատվության ցածր մակարդակ, տարեկան սուբսիդիաների ավելացում և անապատացման վտանգ Արարատյան հարթավայրում:

Պահանջվող ռեսուրսներ

Տեղական և միջազգային կապալառու կազմակերպություններ

Ֆինանսավորման աղբյուրներ

- ՀՀ պետական բյուջե
- Տվյալ միջոցառման համար իրավական հիմք է հանդիսացել «Հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» 2023 թվականի փետրվարի 9-ի ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված դրույթների համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացված՝ Մաստարայի ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում ծրագիրը:

3.2.7 Ոռոգման համակարգի կառուցում 1004-31020

Այս միջոցառման շրջանակներում՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Սրաշեն, Ճակատեն և Շիկահող բնակավայրերի ոռոգման խնդրի լուծման նպատակով տեխնիկատնտեսական ուսումնասիրություն կատարելու, հետագայում նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմելու և շինարարական աշխատանքներ իրականացնելու համար նախատեսվում է՝ 2027թ. համար՝ **85,000.0** հազար դրամ /տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ, նախագծերի ձեռքբերում, փորձաքննություն, ՇՄԱԳ/, 2028-2029թթ.՝ **1200,000.0** հազար դրամ շինարարության մեկնարկի համար:

3.2.8 Կապսի ինքնահոս ջրատարի նախագծում և կառուցում 1004-31021

Նախատեսվում է Կապսի ջրամբարը 25 մլն մ³-ից մինչև 60 մլն մ³ ծավալով նախագծում և կառուցում՝ համատեղված Կապսի ինքնահոս ջրատարի նախագծում և կառուցում միջոցառման հետ:

2013-2014թթ. հանրապետությունում մեկնարկվել է Կապսի ջրամբարի նախագծման և կառուցման ծրագիրը: 25 մլն մ³ ծավալով ջրամբարի տարբերակի նախագծային փուլն ավարտվել է և 2023թ-ին մեկնարկվել են 25 մլն մ³ ծավալով Կապսի ջրամբարի շինարարական աշխատանքները: Նկատի ունենալով հայեցակարգի մակարդակով առկա տեխնիկատնտեսական հիմնավորումները, Ջրային կոմիտեն ռազմավարական առումով նպատակահարմար է գտնում հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնելու ջրամբարը մինչև 60 մլն մ³ նախագծման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա ժամանակային առումով սահուն և ներդաշնակ կազմակերպելու ընթացիկ շինարարական աշխատանքների մեկնարկային փուլը՝ զուգահեռաբար նաև մշակելով մինչև 60 մլն մ³ ծավալով տարբերակի նախագիծը:

Վերը ներկայացված ծրագրի հետ համատեղված սկզբունքով անհրաժեշտ է զարգացնել նաև Կապսի ինքնահոս ջրատարի նախագծման և կառուցման ծրագիրը, որը ևս առաջարկվում է պլանավորել 2027-2029 թվականների բյուջետային հայտում: Նախատեսվող ջրատարի նախնական գնահատված երկարությունն է շուրջ 80 կմ, որով նախատեսվում է Կապսի ջրամբարում կուտակվող ջրաքանակները տեղափոխել մինչև Արագածոտնի մարզ և ավելի ստորին տարածաշրջաններ: Սույն ջրատարի կառուցումը ռազմավարական նշանակություն ունի և կնպաստի հանրապետությունում ձևավորվող և ամբարվող ջրային ռեսուրսների առավել արդյունավետ, ամբողջական և նպատակային օգտագործմանը:

Կապսի ինքնահոս ջրատարի նախագծում և կառուցում միջոցառման համար առաջարկվում է նախատեսել 2027թ-ի համար՝ 300,000.0 հազար դրամ (նախագծում), 2028թ-ի համար՝ 500,000.0 հազար դրամ (շինարարություն):

Շարունակությունը նախատեսվում է հաջորդ տարիներին:

Շինարարության արժեքը նախնական գնահատմամբ կազմում է շուրջ 40.5 մլրդ դրամ (90.0 մլն. եվրո):

3.2.9 Կապսի ջրամբարը 60 մլն մ³ ծավալով կառուցման ծրագիր 1004-31023

Կապսի ջրամբարը 60մլն մ³ ծավալի դեպքում հնարավորություն կստեղծվի Շիրակի և Արագածոտնի մարզերի ոռոգելի հողատարածքներն ավելացնել ևս 2200 հա-ով, իսկ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի շուրջ 5300 հա հողատարածքների ոռոգումը մեխանիկականից փոխարինել ինքնահոս ոռոգման եղանակի՝ տարեկան խնայելով 11.0 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա:

Համաձայն CES կազմակերպության 2019թ.-ին թարմացված «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ» հաշվետվության տվյալների /տոկոսադրույքի հաշվարկներում հաշվի է առնված նաև Կապսի ջրամբարից դեպի Թալինի մայր ջրանցք 70կմ երկարությամբ խողովակաշարի արժեքը/ տնտեսական ներքին եկամտաբերության տոկոսադրույքը (EIRR) կազմել է 12%,

Այս ցուցանիշներին հնարավոր կլինի հասնել Կապսի ջրամբարից դեպի Թալինի մայր ջրանցք խողովակաշարի կառուցման պարագայում:

Կապսի ջրամբարի 60մլն մ³ ծավալով կառուցման ռազմավարական կարևորությունը.

Ախուրյանի գետավազանում կլիմայի փոփոխության և Թուրքիայի կողմից Ախուրյան գետի Կարս վտակի և Արաքս գետի վրա ինտենսիվ կերպով իրականացվող ջրամբարարաշինության հետևանքով է, մոտակա տարիներին Հայաստան մուտք գործող ջրային ռեսուրսների 1,5 մլրդ. մ³ ծավալի կրճատում է կանխատեսվում: Դրանով պայմանավորված ներկայումս Հայաստանի համար առավել կարևոր է ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումն ու ջրային պաշարների ամբարումը:

Կանխատեսվող ջրի դեֆիցիտը որոշ չափով հնարավոր է մեղմել Կապսի ջրամբարը 60 մլն մ³ ծավալով կառուցելու պարագայում:

Թալինի տարածաշրջանում մեխանիկական եղանակով ոռոգվող 5300 հա հողատարածքները գտնվում են Ախուրյանի ջրամբարի իշխման գոտում: Ախուրյանի ջրամբարը կառավարվում է Թուրքիայի և Հայաստանի կողմից համատեղ և ձևավորված պաշարները օգտագործվում են հավասարաչափ: Կապսի ջրամբարի 60 մլն մ³ ծավալով ջրամբարման դեպքում վերոնշյալ հողատարածքները կոռոգվեն Կապսի ջրամբարի շնորհիվ՝ Կապսի ջրամբարից դեպի Թալինի մայր ջրանցք նախատեսվող խողովակաշարի միջոցով: Դա հնարավորություն կընձեռի, պահպանելով միջպետական պարտավորությունը, ամբողջությամբ օգտագործել շուրջ 40 մլն մ³ ջուր առանց այն կիսելու Թուրքիայի հետ:

2023 թվականի ապրիլի 21-ին Չինական “Shanxi Construction Investment Group” և “Shanxi Hydraulic Construction Engineering Bureau” համատեղ ձեռնարկության (“SCIG” - “SHECB” ՀՁ) հետ կնքվել է 74.2 մլն եվրո արժեքով Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման շինարարական պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Շինարարական աշխատանքները մեկնարկել են **2023 թվականի հունիսի 9-ին՝ 34 ամիս** տևողությամբ, սակայն Կապալառուի կողմից ծանուցմամբ սահմանված աշխատանքներն ու պայմանագրային շտկումները սահմանված ժամկետներում չիրականացնելու պատճառով՝ հիմք ընդունելով ՀՀ ՏԿԵ նախարարի Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ ուղղված 2025 թվականի դեկտեմբերի 9-ի № ԴԽ/15.2/42406-2025 գրությունը՝ մեկնարկել է Կապալառուի պայմանագրի դադարեցման գործընթաց:

Ծրագրի հետագա շարունակությունն ապահովելու նպատակով կընտրվի նոր Կապալառու, որի համար նախատեսվում է շինարարական աշխատանքների ծառայությունների ձեռքբերման գործընթաց:

Ըստ Խորհրդատուի նախնական գնահատման Կապսի ջրամբարը 25 մլն խմ ծավալից 60 մլն հասցնելու նպատակով շինարարության համար լրացուցիչ կպահանջվի՝ 34,5 մլն եվրո, որից (25,83 մլն եվրոն վարկային միջոցներ են, 8,67 եվրոն՝ համաֆինանսավորում) (27,7 մլն եվրո՝ շինարարության համար, 3,3 մլն եվրո խորհրդատվական ծախսերի համար, 3,5 մլն եվրո՝ ինդեքսացիա):

1. Կապսի ջրամբարը միանգամից 60 մլն խմ ծավալի հասցնելու համար անհրաժեշտ է իրականացնել փոփոխություններ Վարարային ջրհեռի, պատվարի, ցեմենտացիոն և հակաֆիլտրացիոն միջոցառումների և Նոր Ճանապարհի ու

կամուրջի առկա նախագծանախահաշվային փաստաթղթերում: Խորհրդատուի կողմից ներկայացված Նախագծային փոփոխությունների համար անհրաժեշտ ժամկետներից և Կապալառուի պլանավորումներից պարզ է դառնում, որ հրատապ է աջ հովտի ցեմենտացիայի նախագծի փոփոխությունը: Հաշվի առնել, որ նախագծային փոփոխությունների համար պահանջվող ժամկետներում հաշվի չեն առված հաստատումների համար պահանջվող ժամկետները, Ծրագրի ընթացքը սահուն ապահովելու ինչպես նաև հետագայում հավելյալ ուշացումներից և Կապալառուի կողմից հարկադիր պարապուրդի համար ֆինանսական պահանջից խուսափելու նպատակով արդեն իսկ այս պահին անհրաժեշտ է մեկնարկել նախագծային փոփոխությունները:

Առաջարկվում է նախատեսել՝ 2027թ՝ 500,000.0 հազար դրամ, 2028թ՝ 500,000.0 հազար դրամ, 2029թ.՝ 588,714.0 հազար դրամ:

Միաժամանակ, 05.06.2025թ. N 741-Ն /2026-2028թթ. ՄԺԾԾ/ որոշմամբ 2028թ. համար նախատեսվել էր 588,714.0 հազար դրամ

Ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ կառավարություն, (հետագա ֆինանսավորման համար բանակցություններ են տարվում ԱԶԲ-ի հետ):

Տվյալ միջոցառման համար իրավական հիմք է հանդիսանում 2023 թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած ՀՀ Շիրակի մարզի 2022 թվականի հաշվետվության մասին խորհրդակցության N Վ/166-2023 արձանագրության 3-րդ կետի 1.4 ենթակետը:

3.2.10 Ոռոգման պոմպակայանների վերազինում և կահավորում արևային ֆոտովոլտային կայաններով 1004-31025

Էլ. էներգիայի ծախսի նվազեցման համար անհրաժեշտ է էներգաարդյունավետ տեխնոլոգիաներով վերազինել և արևային ֆոտովոլտային կայաններով կահավորել առաջնահերթության կարգով ընտրված վերականգնման ենթակա պոմպակայանները, որոնց համար **առաջարկվում է 2027թ. համար 1,000,000.0 հազար դրամ, 2028թ.՝ 1,500,000.0 հազ. դրամ, 2029թ.՝ 1,500,000.0 հազ. դրամ:** Նշված ծառայությունները շարունակական են: Տվյալ միջոցառման համար իրավական հիմք է հանդիսանում ՀՀ վարչապետի N Վ/150-2023 արձանագրության 3.2.3 կետերի հանձնարարականների կատարման շրջանակներում՝ ՀՀ բոլոր մարզերում արևային ֆոտովոլտային կայաններով կահավորման ենթակա առաջնահերթ ոռոգման և խմելու ջրի մեխանիկական պոմպակայանները գույքագրելու և դրանց թվի, անհրաժեշտ աշխատանքների իրականացման ֆինանսական գնահատականի և ֆինանսավորման աղբյուրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հավաքագրումը:

(Հաշվարկների համար հիմք են ընդունվել ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի 3 պոմպակայանների վերազինման՝ ՄԱԶԾ-ի պոմպակայանների ծրագրի գումարները և կիրառվել են մոտավոր գործակիցներ, նկատի ունենալով, որ այս դեպքում

պոմպակայանները կառուցվելու են 0-ից, արդյունքում ստացվել են մոտավոր, խոշորացված ցուցանիշներ):

Մատուցվող ծառայությունների և շահառուների շրջանակը

- Խորհրդատվական ծառայություններ՝ պոմպակայանների վերազինման տեխնիկական և ֆինանսական հիմնավորման համար
- Արևային ֆոտովոլտային կայանների նախագծում և տեղադրում
- Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրում
- Շահառուներ՝ ՀՀ բոլոր մարզերի ոռոգման ջրի մեխանիկական պոմպակայաններ օգտագործող ջրօգտագործող ընկերություններ, համայնքներ, գյուղատնտեսական արտադրողներ

Նպատակը

- Էլեկտրաէներգիայի ծախսերի նվազեցում՝ վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործմամբ
- Պոմպակայանների էներգաարդյունավետության բարձրացում
- Ոռոգման համակարգերի կայունության ապահովում

Նկարագրությունը

Միջոցառումը ներառում է առաջնահերթության կարգով ընտրված պոմպակայանների վերազինում էներգաարդյունավետ տեխնոլոգիաներով և արևային ֆոտովոլտային կայաններով, ինչը թույլ կտա նվազեցնել էներգիայի սպառումը և շահագործման ծախսերը: Նախնական ուսումնասիրությունների և գնահատումների հիման վրա մշակվել են ֆինանսական հաշվարկներ՝ ելնելով ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի 3 պոմպակայանների վերազինման ՄԱԶԾ ծրագրի տվյալներից:

Սպասվող օգուտներ

- Էլեկտրաէներգիայի սպառման և ծախսերի նվազեցում
- Ոռոգման համակարգերի հուսալիության բարձրացում
- Պոմպակայանների շահագործման ինքնարժեքի կրճատում
- Գյուղատնտեսության արտադրողականության բարձրացում

Զֆինանսավորման դեպքում ծագող խնդիրներ

- Էլեկտրաէներգիայի բարձր ծախսեր
- Ոռոգման պոմպակայանների խափանումների մեծ հավանականություն
- Գյուղատնտեսական արտադրության նվազում
- Զրօգտագործողների սոցիալ-տնտեսական խնդիրների խորացում

Արդյունքային ցուցանիշներ (քանակական, որակական, ժամկետային)

- Ուսումնասիրությունների արդյունքում առաջնահերթության կարգով ընտրված պոմպակայանների վերազինում 2027-2028 թվականներին
- Էլեկտրաէներգիայի սպառման նվազեցում՝ 30-50%-ով
- Ոռոգման ծածկույթի և ջրամատակարարման բարելավում

Պահանջվող ռեսուրսներ:

- Մասնագիտական խորհրդատվական ծառայություններ
- Տեխնիկական նախագծման և շինարարության աշխատանքներ
- Ֆինանսական ռեսուրսներ՝ 1.5 մլրդ դրամ (տարեկան)

Ֆինանսավորման աղբյուրներ:

- ՀՀ պետական բյուջե

3.2.11 Եղվարդի ջրամբարի կառուցում 1004-31026

Խորհրդային տարիներին նախագծվել է Եղվարդի ջրամբարը՝ ավելի քան 200 մլն խմ ծավալով ջրի ամբարման և ջրամբարի իշխման տարածքներում ոռոգման կայուն ջրամատակարարման ապահովման նպատակով: Այդ ժամանակաշրջանում մեկնարկել են նաև շինարարական աշխատանքները, սակայն տարբեր պատճառներով ջրամբարի կառուցման ծրագիրը մնացել է անավարտ:

Ջրամբարի կառուցման ծրագրին ՀՀ կառավարությունն անդրադարձել է նաև 2014-2016 թթ-երին՝ այդ նպատակով համագործակցելով Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (այսուհետ՝ JICA) հետ: Վերջինիս ֆինանսավորմամբ և ճապոնական խորհրդատվական ընկերության կողմից մեկնարկված իրագործելիության ուսումնասիրությունները ավարտվել են 2016թ-ին: Համաձայն հիշյալ ուսումնասիրությունների ավարտական հաշվետվության, շուրջ 90 մլն խմ ծավալով ջրամբարի կառուցումը գնահատվել էր իրագործելի և առաջարկվել տեխնոլոգիական լուծումների մի քանի այլընտրանքներ: Տվյալ ժամանակաշրջանում ծրագրի հետագա զարգացում չի նախաձեռնվել:

Գործընկերային փորձի հետագա զարգացման, ինչպես նաև համատեղ իրականացված ուսումնասիրությունների արդյունքների թարմացման նպատակով 2023թ-ին ՀՀ ՏԿԵ նախարարության և ջրային կոմիտեի նախաձեռնությամբ, մեկնարկել են քննարկումներ JICA-ի հետ, որի շրջանակներում 2023թ-ի դեկտեմբերին ՏԿԵ նախկին նախարար պարոն Գ. Սանոսյանի հետ հանդիպման ընթացքում JICA-ի ներկայացուցիչները տեղեկացրել են, որ այլ առաջնահերթ ուղղությունների զարգացմամբ պայմանավորված՝ ջրամբարաշինական հիշյալ ծրագրով համագործակցելու ուղղությամբ հետաքրքրված չեն:

Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ Բանկ) հետ տարբեր ձևաչափով քննարկումների շրջանակներում 2024-2025թթ-երին Բանկը հայտնել է իր պատրաստակամությունը՝ համատեղ մշակելու և իրականացնելու Եղվարդի ջրամբարի իրագործելիության առավել խորը և արդիական ուսումնասիրության ծրագիր, որին ինչպես ՏԿԵ նախարարությունը, այնպես էլ Ջրային կոմիտեն դրական են արձագանքել:

Նկատի ունենալով Բանկի ջրամբարաշինական ծրագրերի միջազգային փորձառությունը, ինչպես նաև Բանկի Երևանի գրասենյակում ջրային համակարգերի ոլորտային կարողություններն ու միջազգային ինժեների մշտական տեղակայվածության հանգամանքը, Ջրային կոմիտեն նպատակահարմար է համարել առկա ելակետային նյութերի հիման վրա ԱԶԲ-ի հետ մեկնարկելու Եղվարդի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության նոր ծրագիր:

Հաշվի առնելով, որ Եղվարդի ջրամբարի կառուցման արդյունքում հնարավոր է մեխանիկական ոռոգումը փոխարինել ինքնահոս եղանակով ոռոգման, վերանորոգել, վերականգնել ոռոգման համակարգը, բարձրացնել ջրապահովվածության մակարդակը, կրճատել Սևանա լճից ոռոգման նպատակով իրականացվող ջրառը, ավելացնել նոր ոռոգելի հողատարածքներ, ապահովել հուսալի և անխափան ոռոգում, ուստի ջրամբարի կառուցումը ջրային ռեսուրսների խնայողության, կայուն կառավարման և արդյունավետ օգտագործման տեսանկյունից ունի ռազմավարական նշանակություն՝ գյուղատնտեսության զարգացման և Սևանա լճի պահպանության համատեքստում:

Եղվարդի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրության նպատակով նախատեսվում է տեխնիկական աջակցության ֆինանսական ռեսուրսներ տրամադրելու նպատակով դիմել ԱԶԲ-ին:

Իրագործելիության ուսումնասիրություններից հետո կպարզվեն Ջրամբարի կառուցման համար պահանջվող ֆինանսական միջոցները (նախագծում, փորձաքննության անցկացում, շինարարություն, տեխնիկական և հեղինակային հսկողություն):

Խիստ մոտավոր հաշվարկներով Եղվարդի ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրության համար նախատեսվում է **50,000.0** հազ. դրամ:

3.2.13 Հատուկ նշանակության օբյեկտների պահպանություն 1072-11015

2021 թվականին «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունն առաջարկել է իր կողմից ֆինանսավորվող կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության հարցը տեղափոխել ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման դաշտ, որի արդյունքում ազատված ֆինանսական միջոցները (տարեկան շուրջ 400.0 մլն դրամ) կուղղվեն կարևորագույն օբյեկտների պահպանության հիմնախնդիրների լուծմանը, տեխնիկական վերազինմանը և կապիտալ ներդրումների իրականացմանը: Տարբեր տեսչական մարմինների, մասնավորապես՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինների կողմից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) պարբերաբար իրականացվում են ստուգումներ, հարուցվում վարույթներ և արդյունքում կայացվում Ընկերության գլխավոր տնօրենին վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ:

2019-2022 թվականների ընթացքում վերը նշված մարմինների կողմից հարուցվել է շուրջ 44 վարույթ, որոնց մի մասը կարճվել է, իսկ մյուս դեպքերում վարչական տույժ է նշանակվել Ընկերության գլխավոր տնօրենի նկատմամբ:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից արձանագրված խախտումները վերաբերում են դեռևս 2016 թվականի նոյեմբերի 21-ին Վարձակալության պայմանագրի կնքման պահին վարձակալությամբ հանձնվող գույքը սանիտարական կանոններին ու նորմերին չհամապատասխանելու հանգամանքը: Տեսչական մարմինները պարտավորեցնում են Ընկերությանը դրանք համապատասխանեցնել սանիտարական կանոններին ու նորմերին՝ առանց դրանց համար իրատեսական ժամկետներ սահմանելու և հաշվի չառնելով բազմաթիվ այլ օբյեկտիվ պատճառներ ու հանգամանքներ:

Վարձակալության փոխանցված ջրային համակարգերի սանիտարական պահպանման և անօտարելի գոտիներում ՀՀ օրենսդրության խախտումներով կառուցված շենքերի, շինությունների նաև այլ ապօրինի գործողությունների դեմ պայքարելու և Կողմերի միջև պատասխանատվության հստակեցման անհրաժեշտությունից ելնելով՝ Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի միջև 2019 թվականի ապրիլի 23-ին կնքվել է Վարձակալության պայմանագրի մաս կազմող N 9 համաձայնագիրը, համաձայն որի Վարձակալը պատասխանատվություն չի կրում փոխանցված ջրային համակարգերի սանիտարական պահպանման և անօտարելի գոտիներում ՀՀ օրենսդրության խախտումներով կառուցված շենքերին ու շինություններին, ինչպես նաև այլ ապօրինի գործողությունների հետևանքով ջրային համակարգերի հնարավոր վթարների դեպքում սպառնացող վտանգների, ծանր հետևանքների և պատճառված վնասների համար:

Դեռևս 2021 թվականին, Ընկերությունն առաջարկել է իր կողմից ֆինանսավորվող կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության հարցը տեղափոխել ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման դաշտ, որի արդյունքում ազատված ֆինանսական միջոցները (տարեկան շուրջ 400.0 մլն դրամ) կուղղվեն կարևորագույն օբյեկտների պահպանության հիմնախնդիրների լուծմանը, տեխնիկական վերազինմանը և կապիտալ ներդրումների իրականացմանը:

Առաջարկը ներառվել է Վարձակալության պայմանագրի մաս կազմող 2021 թվականի նոյեմբերի 10-ին կնքված N 24 համաձայնագրի 2-րդ կետում:

2023 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագիծը քննարկելիս հարցի առնչությամբ Զրային կոմիտեն, որպես առաջարկություն, բյուջետային հայտում ներառել է նաև Ընկերության կողմից ներկայացված առաջարկությունը՝ նախատեսելով, որ այդ ազատված միջոցները յուրաքանչյուր տարի կներառվեն կարևորագույն ջրային համակարգերի վերականգնման և արդիականացման ծրագրի իրագործման նպատակով: ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի 1531-Ա որոշմամբ ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել 2023 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագիծը, որում ներառված չէ Զրային կոմիտեի կողմից լրացուցիչ բյուջետային հայտով ներկայացված «Հատուկ նշանակության օբյեկտների պահպանություն» միջոցառումը:

2022 թվականի սեպտեմբերի 12-ին ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մոտ կայացած ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի պետական բյուջեի հայտով առկա խնդիրների մասին խորհրդակցության արձանագրության 1-ին կետի 2-րդ ենթակետով՝ նախատեսվել է «Զրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «Հատուկ նշանակության օբյեկտների պահպանություն» միջոցառման գծով ներկայացնել լրացուցիչ հաշվարկ-հիմնավորումներ: Ընկերությունը ներկայացրել է իր հաշվարկները և հիմնավորումները, և Զրային կոմիտեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացրել N24 համաձայնագրի Հավելված 1-ը և ՀՀ ոստիկանության ՊՊԳ վարչության և Ընկերության միջև 2017 թվականի հունվարի 19-ին կնքված պայմանագիրը:

Դեռևս 2017 թվականին, Ընկերությունը 15 տարիների համար ներկայացրել է սակագնային պլան, որտեղ սանիտարական կանոնների և նորմերի համապատասխանեցման աշխատանքների համար գումար նախատեսված չի եղել, իսկ ներկայումս այն նախատեսելու դեպքում իր ազդեցությունը կունենա սակագնի բարձրացման վրա:

Ծրագրի իրականացման արդյունքներով 2031 թվական, ազատված միջոցները կուղղվեն «Վեոլիա Զուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝ բացառապես կարևորագույն նշանակության օբյեկտների վերազինման, վերակառուցման և վերանորոգման համար: Գույքը կօգտագործվի իր նպատակային նշանակությանը համապատասխան, պատշաճ մակարդակով կկազմակերպվի դրանց շահագործումն ու պահպանումը, ինչպես նաև կբարելավվի խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների մակարդակը: Ծրագրի իրականացման արդյունքում ձևավորված գույքը սահմանված կարգով հանդիսանալու է պետական սեփականություն, որն ամրացվելու է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին՝ հետագայում վարձակալության հանձնելու նպատակով:

2027 թվականի բյուջետային հայտում առաջարկվում է ներառել Ընկերության կողմից ներկայացված առաջարկությունը՝ նախատեսելով, որ այդ ազատված միջոցները, որոնք կազմում են տարեկան 400.0 մլն դրամ, յուրաքանչյուր տարի կօգտագործվեն

կարևորագույն ջրային համակարգերի վերականգնման և արդիականացման ծրագրի իրագործման նպատակով:

ՀՀ 2027-2029թթ. յուրաքանչյուր տարվա համար առաջարկվում է 400,000.0 հազար դրամ համար:

3.2.14 Խմելու ջրի ոլորտում ջրային համակարգերի չափագրում, քարտեզագրում և վկայականների ձեռքբերում 1072-11016

2016 թվականի նոյեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի շրջանակներում Ջրային կոմիտեն պարտավորվել էր Վարձակալին փոխանցել նախորդ 5 ջրամատակարար ընկերությունների տիրապետման տակ մեկնարկային օրվա դրությամբ գտնվող ամբողջ գույքը: Մինչդեռ Վարձակալության պայմանագրի իրականացման 6 տարիների ընթացքում (2017-2022թթ.) ընթացքում կնքված համաձայնագրերով վարձակալության է փոխանցվել սեփականության իրավունքի գրանցման վկայականներ ունեցող անշարժ գույքի միայն մի մասը: Սակայն դեռևս առկա են մեծ քանակի անշարժ գույք /որը պետք է փոխանցվեր Վարձակալության պայմանագրի մեկնարկին/, որն այսօր փոխանցված չէ Վարձակալին: Վարձատուի կողմից Վարձակալին հանձնված չեն նաև վարձակալված ջրային համակարգերի (ջրագծերի, կողուղագծերի) սեփականության վկայականները, որոնք ևս պետք է ստանան պետական գրանցում (շուրջ 540 սեփականության իրավունքի գրանցման վկայականներ ձեռքբերում): Նշված աշխատանքները չեն իրականացվել ֆինանսական միջոցների սղության պատճառով: Կառուցված և վերականգնված հիդրոտեխնիկական կառուցվածքների սեփականության իրավունքի գրանցման վկայականների ձեռքբերման համար անհրաժեշտ է իրականացնել չափագրում/ մեկ միավոր գույքի համար 96000 դրամ/:

1.Չափագրում /յուրաքանչյուր միավորի համար միջինը 60000 ՀՀ դրամ

2.Իրավունքի պետական գրանցում /յուրաքանչյուր միավորի համար միջինը 25000 ՀՀ դրամ/

3.Նոտարական վավերացում /յուրաքանչյուր միավորի համար միջինը 20000 ՀՀ դրամ,

Փաստորեն շուրջ 540 վկայականների գրանցման համար անհրաժեշտ է 24,300.0 հազար դրամ /540*25.0+540*20.0=24,300.0 հազար դրամ/:

3.2.15 ՀՀ տարածքում վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում 1072-31009

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ Տավուշի մարզի **Նոյեմբերյան համայնքի Ջուջևան, Ոսկեպար, Կոթի, Ոսկեվան, Բարեկամավան** բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում և համակարգերի հիմնանորոգում, մասնավորապես՝

Ջուջևան բնակավայրը ջրաքանակի խնդիր չունի. աղբյուրներից ջուրը կուտակվում է 2 ՕԿՋ-ներում: Ջրագիծը, որը սկիզբ է առնում գետից, վերանորոգվում է սուբվենցիոն ծրագրով, հետո կառուցվելու է նաև 150 խմ ծավալով ՕԿՋ: Ջրի որակն ապահովելու համար անհրաժեշտ է կառուցել ջրի **մաքրման կայան և քլորակայան**: Ջրաչափեր տեղադրված են 70% բաժանորդների մոտ: **Ոսկեպար** բնակավայրի ջրամատակարարումը ապահովվում է 3 աղբյուրներից՝ 2 ՕԿՋ-ների միջոցով: Առկա է ջրաքանակի խնդիր: Բնակավայրից ներքև առկա է մոտ 10լ/վ ելքով աղբյուր: Ջրաչափեր տեղադրված չեն: **Կոթի** բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է 4-5 աղբյուրներից և խորքային հորից: Առկա է ջրաքանակի խնդիր: Ջրաչափ տեղադրված է 60% բաժանորդների մոտ: **Ոսկեվան** բնակավայրի ջրամատակարարումն իրականացվում է 9 տարբեր աղբյուրներից: Առկա է ջրաքանակի խնդիր: **Բարեկամավան** բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է 1 աղբյուրից և 1 խորքային հորից: Առկա է ջրաքանակի խնդիր: Կոթի, Ոսկեվան, Բարեկամավան բնակավայրերի խմելու ջրի խնդիրը լուծելու համար Կոթի-Կարմիր գյուղ ոռոգման ինքնահոս ջրատարից անհրաժեշտ է վերցնել 10-15 լ/վ ջուր, կառուցել ջրի մաքրման կայան, քլորակայան և խմելու ջուրը հասցնել նշված բնակավայրեր, որն այլընտրանքային տարբերակ է նաև Բաղանիս և Ոսկեպար բնակավայրերի համար: Բնակավայրերի առկա ջրամատակարարման համակարգերը սպասարկվում են համայնքի կողմից: Ծրագրի արժեքը կազմում է մոտ 918.0 մլն դրամ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նշված աշխատանքները ներառված են «ՀՀ 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի N 6 հավելվածում, որպես առաջնահերթ իրականացման ենթակա աշխատանքներ: Առաջարկում ենք նախատեսել **2027թ.՝ 50,000. հազար դրամ/նախագիծ/, 2028թ.՝ 434,000.0 հազար դրամ, 2029թ.՝ 434,000.0 հազար դրամ:**

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բաղանիս բնակավայրի ջրամատակարարման խնդիրը լուծելու նպատակով 2021-2022 թվականներին «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով Ջուջևան բնակավայրի անտառամերձ գետակի վրա կառուցվել է գետային ջրընդունիչ ավազային ֆիլտրով, 5լ/վ ջրաքանակով, սակայն այն չի շահագործվում, քանի որ գարնանային հեղեղումների ժամանակ գետընդունիչը վնասվում է: Անհրաժեշտ է կառուցել ջրի մաքրման կայան և քլորակայան, փոխել գետընդունիչի տեղադիրքը: Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է 2 աղբյուրներից: Ջրաչափ տեղադրված է 70%-80% բաժանորդների մոտ: Ջրային կոմիտեն 2025թ. ձեռք է բերել ՀՀ Տավուշի մարզի Բաղանիս բնակավայրի խմելու ջրի գլխամասային հանգույցի (գետային ջրընդունիչ) և մաքրման կայանի կառուցման, գոյություն ունեցող ավազային մաքրման կայանի ապամոնտաժման և վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի և պարզ փորձաքննության փաթեթը: Օբյեկտի կառուցման նախահաշվային արժեքը կազմում է **118,521.1 հազար դրամ, առաջարկում ենք նախատեսել 2027թ.:** Փորձաքննության դրական եզրակացությունը կցվում է: Միաժամանակ տեղեկացնում ենք նաև, որ նշված աշխատանքները ներառված են «ՀՀ 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի N 6 հավելվածում, որպես առաջնահերթ իրականացման ենթակա աշխատանքներ:

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր, Նոնաձոր և Ալվանք բնակավայրերի ջրամատակարարման խնդիրների լուծման նպատակով ուսումնասիրություններ կատարելու, նախագծանախահաշվային փաստաթղթեր ձեռք բերելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունն առաջարկել էր վերոնշյալ բնակավայրերի ջրամատակարարման խնդիրների լուծման հարցին անդրադառնալ ՀՀ

2026թ-ի պետական բյուջեով ՀՀ ՏԿԵ նախարարության գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակներում՝ ելնելով աշխատանքների իրականացման առաջնահերթությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված աշխատանքները ներառված են «ՀՀ 2026թ. պետական բյուջեի մասին» օրենքի N 6 հավելվածում, որպես առաջնահերթ իրականացման ենթակա աշխատանքներ: Առաջիկայում Ջրային կոմիտեն կշրջանառի ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ առաջարկելով հատկացնել շուրջ 70,000.0 հազար դրամ՝ Շվանիձոր, Նոնաձոր և Ալվանք բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի կառուցման համար ուսումնասիրություններ կատարելու, նախագծանախահաշվային փաստաթղթեր ձեռք բերելու նպատակով: Վերոնշյալ ծառայությունների ձեռքբերումից հետո անհրաժեշտ կլինի **2027 և 2028 թվականներին նախատեսել 500,000.0 հազար դրամ** (յուրաքանչյուր տարվա համար) գումար շինարարական աշխատանքների իրականացման համար:

Ընդամենը միջոցառման համար առաջարկվում է. 2027թ.՝ 668,521.1 հազար դրամ, 2028թ.՝ 934,000.0 հազար դրամ, 2029թ.՝ 434,000.0 հազար դրամ:

3.2.16 Սևանա լճի ավազանի քաղաքային 3 բնակավայրերում գործող կեղտաջրերի մաքրման կայաններից արտանետվող կեղտաջրերի ամբողջական մաքրում և տարածաշրջանի գյուղական բնակավայրերի կոյուղացման աշխատանքների իրականացում 1072-31016

Սևանա լճի ավազանի կեղտաջրերի կառավարման ծրագիր, մասնավորապես՝ կոյուղագծերի ընդլայնում և վերակառուցում, պոմպակայանների ու ենթակառուցվածքների արդիականացում, ինչպես նաև Գավառի, Մարտունու և Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանների արդիականացում և կենսաբանական մաքրման ներդրում: Միջոցառման համար մշակվել է հանրային ներդրումային ծրագրի նախագծային փաթեթ, համաձայն որի աշխատանքները ներառում են հետևյալ 4 բաղադրիչները՝ նախագծում և թույլտվություններ, ԿՄԿ-ների արդիականացման և ընդլայնման շինարարություն, ԿՄԿ-ների տեստավորում, Կոյուղու համակարգի նորոգման և ընդլայնման շինարարություն: Ծրագրի տևողությունը կազմում է 60 ամիս (2027-2031 թթ), գնահատված ընդհանուր արժեքը կազմում է 39,648.0 մլրդ դրամ:

Առաջարկում ենք նախատեսել **2027թ.՝ 2,305,000.0 հազար դրամ, 2028թ.՝ 10,292,000.0 հազար դրամ, 2029թ.՝ 10,292,000.0 հազար դրամ:**

3.2.17 Եվրոպական ներդրումային բանկի աջակցության շրջանակներում «Դիմակայուն Սյունիք» շրջանակային վարկային ծրագրով խմելու ջրամատակարարման համակարգի կառուցում և վերակառուցում 1072-31017

«Դիմակայուն Սյունիք» ծրագիր (RESYP) - Ջրամատակարարման բաղադրիչ: 2025 թ. հուլիսի 16-ին ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և ԵՆԲ-ի միջև «Հայաստան – Դիմակայուն Սյունիք ծրագիր» ԿԶԵՀ+ Հատուկ ներդրումային պատուհան 1» Ֆինանսական պայմանագիրը, որով սահմանվում է, որ ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 50 մլն եվրո վարկային միջոց:

ՀՀ կառավարությունը պարտավորվում է համաֆինանսավորել այն ծախսերը (հարկեր, տուրքեր, գործառնական ծախսեր), որոնք չեն կարող իրականացվել վարկային միջոցների հաշվին: Ծրագրի նպատակն է բարելավել համայնքների կենսապայմանները՝ ապահովելով հուսալի խմելու ջրի մատակարարում, ինչպես նաև որակյալ կրթության և առողջապահական ծառայությունների հասանելիություն: Հիմնական ներդրումային 3 ուղղություններից (1. առողջապահական ծառայությունների բարելավում, 2. տեխնիկական և մասնագիտական կրթության հասանելիության ընդլայնում և 3. համայնքների և տնային տնտեսությունների ջրամատակարարման համակարգերի զարգացում) ջրամատակարարման բաղադրիչի համար նախատեսված է Ծրագրի ընդհանուր բյուջեի կեսը՝ շուրջ 25 մլն եվրո, որն ուղղվելու է ջրամատակարարման ենթակառուցվածքների բարելավմանը:

Ջրամատակարարման բաղադրիչի հիմնական քայլերն են՝

1. Մոտ 50 փոքրածավալ ենթակառուցվածքային նախագծում և պատրաստում (կառուցում, վերակառուցում, վերականգնում)՝ համայնքային և գյուղական մակարդակում:

2. Բնակչության համար խմելու ջրի որակի և հուսալիության բարձրացում:

3. Վերաբնակեցված ընտանիքների ինտեգրման և կենսապայմանների բարելավման աջակցություն:

4. Ջրամատակարարման համակարգերի կայունություն՝ նախագծային փուլում հաշվի առնելով էներգախնայող մոտեցումներ և վերականգնվող էներգիայի հնարավոր կիրառություն: Ծրագրով նախատեսվում է տեխնիկական աջակցության խորհրդատվական ծառայություններ, որի բյուջեն կազմում է 2,7 մլն եվրո: Տեխնիկական աջակցության աշխատանքները մեկնարկել են 2025թ. հոկտեմբեր ամսին: Տևողությունը կազմում 24 ամիս:

Առաջարկում ենք նախատեսել 2027թ.՝ 11,245,750.0 հազար դրամ /25 մլն եվրո*449.83 02.02.2026թ. փոխարժեք/:

3.3. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Ջրային կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների մեջ առանձնացվում են պարտադիր և հայեցողական ծախսերը, մասնավորապես, պարտադիր ծախսերի մեջ ներառված են Ջրային կոմիտեի վարչական ապարատի պահպանման ծախսերը, որի համար իրավական հիմք է հանդիսանում ՀՀ ջրային օրենսգրքի 1.1 հոդվածը, ՀՀ կառավարության 09.02.2001թ. N 92-Ա և 17.10.2002թ. N 1653 որոշումները, միջազգային պայմանագրերով վավերացված վարկային և դրամաշնորհային միջոցառումները, իսկ մնացած միջոցառումները ներառված են հայեցողական ծախսերում:

Տեղեկությունն արտացոլված է հայտին կից ներկայացված Հավելված 3-ի Ձև 1-ում և Հավելված 15-ում:

3.4 Ծախսերի այլընտրանքային սցենարները

Տեղեկությունը կներկայացվի 2027թ. բյուջետային հայտի ներկայացման փուլում՝ համաձայն մեթոդական ցուցումների:

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտներ չեն նախատեսվում:

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Տեղեկությունը կներկայացվի ՀՀ պետական բյուջեն ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում՝ համաձայն մեթոդական ցուցումների:

6. ՄԻՋՈՒՆՈՐՏԱՅԻՆ (ԽԱԶՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Տեղեկությունը կներկայացվի 2027թ. բյուջետային հայտի ներկայացման փուլում՝ համաձայն մեթոդական ցուցումների:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Վարկային և դրամաշնորհային միջոցառումների վերաբերյալ հիմնական տեղեկությունը տրամադրում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը:

7.1 Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ ծրագրի ուղեկցող միջոցառումներ 1004-11019

Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև 19.12.2014թ. ստորագրված «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ ծրագրի ուղեկցող միջոցառումներ» BMZ ID: 2014 70 202 ֆինանսական համաձայնագրի հատկացված 2 միլիոն եվրո դրամաշնորհային գումարի մասհանման կատարման ժամկետը սահմանվել է մինչև 30.12.2019թ.:

Կապի ջրամբարի կառուցման ծրագրի մեկնարկին զուգահեռ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից մեկնարկել է «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ ծրագրի ուղեկցող միջոցառումներ»-ի իրականացման խորհրդատվական ծառայության ձեռքբերման միջազգային մրցութային գործընթաց, որը ներկայումս գտնվում է ավարտական փուլում:

2014 70 202 ֆինանսական համաձայնագրի կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 30.12.2029թ.:

Միջոցառման արժեքը 2,000,000.0 եվրո է, ինչպես նաև՝ 50 տոկոսի չափով համաֆինանսավորում:

Հիշյալ միջոցառման համար **2027-2029թթ.** յուրաքանչյուր տարվա համար առաջարկվում է նախատեսել **455,060.0** հազար դրամ, որից՝ դրամաշնորհային միջոցներ՝ 303,373.3 հազար

դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ 151,686.7 հազար դրամ: Հաշվարկն իրականացվել է 2025թ. հուլիսի 1-ի փոխարժեքով:

Ինտեգրված ջրային ռեսուրսների Կառավարում/ Ախտորյան գետ, Կապսի ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում” նախագծի շրջանակներում ձեռք են բերվում Ուղեկցող միջոցառումների խորհրդատվական ծառայությունները:

Ուղեկցող միջոցառումների խորհրդատուն պետք է աջակցի Ախտորյան գետի ավազանում ջրի, հողի և հարակից ռեսուրսների զարգացմանն ու կառավարմանը՝ անկողմնակալ կերպով առավելագույնի հասցնելու տնտեսական և սոցիալական բարեկեցությունը՝ առանց կենսական էկոհամակարգերի կայունությունը վտանգի ենթարկելու:

Ծառայությունների շրջանակը.

1. Ջրային ոլորտի համապատասխան հաստատությունների կարողությունների գնահատում, վերապատրաստման և կարողությունների զարգացման կարիքների վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում
2. Ջրային ռեսուրսների կառավարման վարչությունը կունենա հնարավորություն շահագործելու և պահպանելու SCADA համակարգը:
3. Ախտորյան գետի ավազանի կառավարման կազմակերպությունը հնարավորություն կունենա համակարգելու, վերահսկելու և կարգավորելու Ախտորյան գետի ավազանի կառավարման պլանի իրականացումը
4. Կազմակերպել Իրազեկման արշավներ Ախտորյան գետի ավազանի ջրօգտագործողների համար
5. Շիրակի ՋՕԸ հնարավորություն կունենան տեխնիկապես ապահովելու պատվարի և ոռոգման ենթակառուցվածքի շահագործումն ու պահպանումը:
6. Տրամադրել խորհրդատվություն և աջակցություն ներտնտեսային ոռոգման համակարգերի կիրառման և պահպանման հարցերում
7. Խորհրդատուն պետք է մշակի գետի վերականգնման և կառուցման պլան և կոնցեպտուալ նախագիծ, ներառյալ կառավարման պլան՝ շրջակա միջավայրի վրա ազդեցություններից խուսափելու/դրանք մեղմելու համար, ինչպես նաև մշակել մանրամասն նախագծման ՏԱ (Տեխնիկական առաջադրանք) գետի վերականգնման և կառուցման համար՝ Արփի լճից մինչև Կապսի ջրամբար ընկած գետահատվածում՝ համագործակցելով Արփի լճի ազգային պարկի հետ և համաձայն ՇՄԱԳ փաստաթղթերի (գետի վերականգնում Արպի լճից 11 կմ ներքև ընկած հատվածում):

Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև 19.12.2014թ. ստորագրված «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/Ախտորյան գետ ծրագրի ուղեկցող միջոցառումներ» BMZ ID: 2014 70 202 ֆինանսական համաձայնագրի հատկացված 2 միլիոն եվրո դրամաշնորհային գումարի մասհանման կատարման ժամկետը սահմանվել էր մինչև 30.12.2019թ.:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Կապսի ջրամբարի կառուցման ծրագրի մեկնարկին զուգահեռ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից մեկնարկել է «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/Ախտորյան գետ ծրագրի ուղեկցող միջոցառումներ»-ի իրականացման խորհրդատվական ծառայության ձեռքբերման միջազգային մրցութային գործընթաց, որը ներկայումս գտնվում է ավարտական փուլում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև նշված խորհրդատվական ծառայության՝ մոտ ժամկետներում մեկնարկման հանգամանքը, խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանումներին՝ սահմանված ընթացակարգերին համապատասխան մեկնարկելու Հայաստանի Հանրապետության և Վերականգնման վարկերի բանկի միջև 19.12.2014թ. ստորագրված «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ ծրագրի ուղեկցող միջոցառումներ» BMZ ID:

2014 70 202 ֆինանսական համաձայնագրի կատարման ժամկետը մինչև 30.12.2029թ. երկարաձգման գործընթացը:

7.2 Համաշխարհային բանկի աջակցության շրջանակներում ոռոգման, ջրամատակարարման և ջրահետացման ծրագրերի իրականացում 1004-31022

2027-2029թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է **3,000,000.0** հազար դրամ:

7.3 Չարգացման ֆրանսիական գործակալության (ՉՖԳ) «Հայաստանում ջրային ռեսուրսների և գյուղատնտեսության համալիր զարգացում» («WAIDA») ծրագիր 1004-31024

ՉՖԳ՝ «Հայաստանում ջրային ռեսուրսների և գյուղատնտեսության համալիր զարգացում» («WAIDA») ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում, **30 մլն եվրո** գնահատված վարկային բաղադրիչի միջոցով, նախատեսվում է իրականացնել.

- Սիսիան, Գորիս և Մեղրի համայնքների ոռոգման համակարգերի վերականգնում և արդիականացում փուլային եղանակով՝ ինքնահոս համակարգեր, պոմպակայաններ, ջրի կրկնակի օգտագործման համակարգեր,

- Խորհրդատվական ծառայություններ (ուսումնասիրություններ, մանրամասն նախագծեր, հսկողություն):

Ծրագիրը հիմնվելու է չորս հիմնական բաղադրիչների վրա՝ տրամաբանական և փոխկապակցված հաջորդականությամբ.

- Ներդրումներ ջրային ենթակառուցվածքների արդիականացման և վերականգնման և ոռոգման ոլորտում: Այս բաղադրիչը անհրաժեշտ նախապայման կլինի ավելի լավ գյուղատնտեսության համար, ինչպես նաև կստեղծի Ծրագրի և ֆերմերների միջև համագործակցության դրական դինամիկա, քանի որ այն արդյունավետորեն կլուծի ֆերմերների առջև ծառայած խնդիրները, ինչպես նաև ենթակառուցվածքների հզորացման ուղղությամբ կլինեն զգալի ներդրումներ, ինչպես նաև ներդրումներ ջրօգտագործող ընկերությունների կարողությունների զարգացման ուղղությամբ:

- Ներդրումներ ավելի զարգացած գյուղատնտեսություն ունենալու համար, որը կլինի բարձր արտադրողականությամբ և մրցունակությամբ, ինչն էլ ույլ կտա մեղմել և հարմարվել կլիմայի փոփոխությանը և խթան կհանդիսանա երիտասարդների, կանանց, փախստականների և կոոպերատիվների ակտիվ մասնակցության համար, որոնք կշահեն հատուկ աջակցությունից: Առանց զարգացած գյուղատնտեսության, ներդրումները ջրային ենթակառուցվածքների և ոռոգման արդիականացման և վերականգնման ուղղությամբ չեն բերի ակնկալվող ֆինանսական և բնապահպանական արդյունքների, ինչպես որ դա շատ հաճախ է պատահում բացառապես ջրային համակարգերի վրա կենտրոնացած ծրագրերում:

- Ներդրումներ ագրոբիզնեսի բնագավառում, ներառյալ ագրոգբոսաշրջությունը, որի նպատակն է ավելի մեծ արժեք հաղորդել արտադրանքին, որը կայուն գյուղատնտեսության նախապայման է: Այս արդյունքը չափազանց կարևոր կլինի ֆերմերների համար ավելի կայուն եկամուտ ստեղծելու համար: Այն կներառի նպատակային աջակցություն ագրոմշակողներին և այլ շահագրգիռ կողմերին, զարգացման այլ նախագծերի հետ սերտ համագործակցությամբ, ինչպես նաև խելացի շուկայավարման մոտեցումներ՝ ուղղված ինչպես ներքին շուկայի, այնպես էլ արտահանման նոր շուկաներին, որոնք կարող են այլընտրանք դառնալ ռուսական շուկայի համար:

- Կանաչ և խելացի գյուղատնտեսության աճի զարգացման համար առաջադեմ ֆինանսական մեխանիզմների մշակում՝ առանցքային ուշադրություն դարձնելով թվայնացմանը:

WAIDA-ն կիրականացվի երկու լրացուցիչ ուղղություններով.

- Տեղական մակարդակով AFD-ն կիրականացնի Ծրագրի «Հողի կառավարում և ոռոգում հանուն տարածքային զարգացման Սյունիքի մարզում» (LITDS) բաղադրիչը:

- Ազգային մակարդակով AFD-ն համաֆինանսավորելու է Համաշխարհային բանկի ջրային ոռոգման ծառայությունների բարելավման (WISE) ծրագիրը:

Երկու բաղադրիչների համար էլ հիմնական ֆինանսավորման աղբյուր հանդիսանում է ԵՄ-ն՝ վերջնական շահառուներին տեխնիկական աջակցության և ներդրումային դրամաշնորհներ տրամադրելու համար:

Ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի Սիսիան, Գորիս և Մեղրի համայնքների մի շարք բնակավայրերում կիրականացվեն ոռոգման համակարգերի վերականգնում և արդիականացում փուլային եղանակով՝ ինքնահոս համակարգեր, պոմպակայաններ, ջրի կրկնակի օգտագործման համակարգեր, ինչպես նաև խորհրդատվական ծառայություններ (ուսումնասիրություններ, մանրամասն նախագծեր, հսկողություն):

Ծրագիրը նպատակաուղղված կլինի.

- Կլիմայի փոփոխության համատեքստում ոռոգման, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համար ջրային ռեսուրսների կառավարման կայունության և արդյունավետության բարելավում ազգային մակարդակում,

- Ոռոգման ոլորտի աշխուժացման հիման վրա ՀՀ Սյունիքի մարզի ռազմավարական տարածքի համապարփակ զարգացմանն աջակցելը և նրա ճկունության ամրապնդումը,

- Գյուղական բնակավայրերում աշխատատեղերի ավելացման խրախուսում,

- Հայաստանի պարենային անվտանգության և ինքնիշխանության ամրապնդում:

Ազգային մակարդակում հետապնդվող հատուկ նպատակները հետևյալն են լինելու.

- Ջրային ռեսուրսների կայուն կառավարում և օգտագործում,

- Ընդլայնել արդյունավետ սանիտարական ծառայությունների անվտանգ հասանելիությունը և խմելու ջրի հասանելիությունը,

- Ավելացնել ջրային ռեսուրսներին կայուն հասանելիություն ունեցող ֆերմերների թիվը և բարձրացնել նրանց դիմադրողականությունը կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ:

Իսկ Սյունիքի մարզի մակարդակով.

- Վերականգնել և արդիականացնել ընտրված ոռոգման ենթակառուցվածքները ՀՀ Սյունիքի մարզում՝ սկզբնական ուշադրություն դարձնելով Սիսիան, Գորիս և Մեղրի համայնքներին.

- Ամրապնդել տարածքի գրավչությունը՝ իրականացնելով ինտեգրված տարածքային զարգացման հետագիծ՝ համաձայն գլոբալ մոտեցման՝ ներառյալ ջուր-հող-գյուղատնտեսություն-կլիմա,

- Աջակցել փորձնական հիմունքներով գյուղատնտեսության ոլորտի անցմանը դեպի ավելի տնտեսապես և սոցիալապես ու էկոլոգիապես կայուն արտադրության եղանակների (արտադրվող ավելացված արժեքի ավելացում, արժանապատիվ աշխատատեղերի պահպանում):

Ծրագրի առաջնահերթ ենթակառուցվածքների ընտրությունը հիմնված կլինի Սիսիան, Գորիս և Մեղրի համայնքների տարածքներում նախատեսվող ուսումնասիրությունների արդյունքների վրա, որը նախատեսվում է իրականացնել Ծրագրի մեկնարկային փուլում:

Վերականգնման ծրագրի համար դիտարկվող ենթակառուցվածքներից որոշները առաջնահերթություն են, հետևաբար սահմանվել են վերականգնման համար առաջնահերթության երեք մակարդակ.

- Քայքայված ինքնահոս համակարգերի և ոռոգման ցանցի վերակառուցում և արդիականացում.
- գործող և քայքայված պոմպակայանների և ոռոգման ցանցերի վերակառուցում և արդիականացում.
- Մայր ջրանցքների (Սպանդարյան և Որոտան) վերակառուցում և արդիականացում, ներառյալ երկրորդ և երրորդ կարգի ջրանցքները:

Համաձայն այս դասակարգման, առաջարկվում է ծրագիր, որը բաժանված է 3 փուլերի՝ ըստ ենթակառուցվածքի առաջնահերթության:

Ծրագրի սահմանման այս փուլում ծախսերի գնահատումը մնում է նախնական:

Վերականգնման ծախսերը մոդելավորվել են հետևյալ կերպ.

1. Հավաքվել են մանրամասն տվյալներ Հայաստանում իրականացվող ոռոգման համակարգի վերականգնման 30 ծրագրերից՝ դրանց հետ կապված ծախսերի հետ միասին:
2. Ծրագրերը դասակարգվել են երեք տեսակի՝ հիմնական, երկրորդական և երրորդական ջրանցքներ:
3. Այս կատեգորիաների համար միավորի միջին ծախսերը սահմանվել են համապատասխանաբար 250 եվրո/մ, 150 եվրո/մ և 75 եվրո/մ:
4. Այս միավոր ծախսերն այնուհետև կիրառվել են փորձնական ծրագրի շրջանակներում ենթակառուցվածքների վերականգնման համար:

Պոմպերի վերականգնման արժեքը համարվում է չնչին՝ համեմատած մոտակա ջրանցքների և խողովակների վերականգնման արժեքի հետ: Հետևաբար, պոմպակայանի վերականգնման համար ներառվել է հարակից ջրանցքի/խողովակների համակարգը (1-ից 4 կմ երկարությամբ), և կիրառվել է ծախսերի ամենաբարձր դրույքաչափը (€250/մ):

Բացի այդ, գնահատվել են նաև խորհրդատվական ծառայությունների ծախսերը, ինչպիսիք են տեխնիկատնտեսական հիմնավորումները, մանրամասն նախագծումը, աշխատանքի վերահսկումը և Զրոգտագործողների ընկերությունների (ԶՕԸ) անձնակազմի վերապատրաստումը, ինչպես նաև անկանխատեսելի դեպքերը:

Նախնական գնահատմամբ ծրագրի համար պահանջվում են 36,0 մլն եվրո (15,14 մլրդ դրամ) վարկային միջոցներ՝ ներառյալ համաֆինանսավորումը (30,0 մլն եվրո վարկ, 6,0 մլն եվրո համաֆինանսավորում):

Առաջարկվում է **2027 թվականի համար՝ 197,081.8 հազար դրամ** (խորհրդատվական ծառայություններ), **2028 թվականի համար՝ 402,918.2 հազար դրամ** (տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ և նախագծային աշխատանքներ), **2029 թվականի համար՝ 600,000.0 հազար դրամ** (ծրագրի իրականացում) (ծրագրի տևողությունը 5 տարի է):

Տվյալ միջոցառման համար իրավական հիմք է հանդիսացել ԵՄ տնտեսական և ներդրումային պլանի ուղենիշների ներքո (ուղենիշ 4, կետ 4.4) նախատեսված աշխատանքները:

7.4 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագիր երրորդ փուլ 1072-11007

ՀՀ պետական բյուջեի «Զրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ» միջոցառմամբ նախատեսված է կատարել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ համատեղ իրականացվող «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագրի ֆինանսական և տեխնիկական աուդիտի աշխատանքները:

2027թ. անհրաժեշտ է 29,490.9 հազ. դրամ (2026թ. ֆինանսական աուդիտի գումարը կազմում է 8,200.11 եվրո կամ 3,688.7 հազար դրամ, 2026թ. 2-րդ կիսամյակի տեխնիկական աուդիտը՝ 39,800.0 եվրո կամ 17,903.2 հազար դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով՝ 4,318.4 հազար դրամ՝ ԱԱՀ և ոչ ռեզիդենտի շահութահարկ:

1 եվրո=449.83 ՀՀ դրամ

8. ՄԻՋՆԱԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2027-2029թթ. Ժամանակահատվածի համար պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները և նոր նախաձեռնությունները)՝ Հավելված 8-ը, Ջրային կոմիտեն, որպես ԲՄԿ չի ներկայացնում:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Տեղեկությունը կամփոփվի Հավելված 10-ում և կներկայացվի 2027թ. բյուջետային հայտի ներկայացման փուլում՝ համաձայն մեթոդական ցուցումների:

10. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ /ԱՆՁՆԱԳԻՐ/

Բյուջետային ծրագրերի նկարագրերը /անձնագրերը/ Հավելված 13-ով կներկայացվի 2027թ. բյուջետային հայտի ներկայացման փուլում՝ համաձայն մեթոդական ցուցումների:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հայտին կից ներկայացված են NN 1, 3, 12, 15 հավելվածները: